

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՄՖԼԵՏԸ

Հ. Սըվաճյանի «Մեղուն» թերթելիս՝ վաղուց է, ինչ մեր ուշադրությունը իր վրա էր հրավիրել 1864 թվի դեկտեմբերի 5-ին տպված անստորագիր մի պամֆլետ, գրված արևմտահայ լեզվով «Կտոր մը Այվազովսքիաբանություն» վերնագրով: Վերջերս Մատենադարանի արխիվային բաժնի թղթերում հայտաբերեցինք դրա ձեռագիր սևագրությունը, որտեղ դարձյալ բացակայում էր հեղինակի անստորագրությունը: Սակայն ուսումնասիրելով ձեռագիրը՝ եկանք այն համոզման, որ գործ ունենք Միք. Նալբանդյանի անհայտ մի գրվածքի հետ:

Պամֆլետի բովանդակությունից ու տպագրության հանգամանքներից դժվար չէ եզրակացնել, որ այն գրվել է Պետրոպավլովյան բերդում, 1864 թվին: Նորահայտ ձեռագիր օրինակը գտնվում է ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից՝ Մատենադարանի արխիվի անթվական վավերագրերի մեջ՝ թղթապանակ № 247, վավերագիր № 1059 ներքո:¹

Առաջին հայացքից կարելի էր կարծել թե սա հենց իր՝ Նալբանդյանի ինքնագիրն է: Սակայն՝ համեմատելով Նալբանդյանի՝ մեր ձեռքի տակ եղած ինքնագրների կամ դրանց նմանահանությունների հետ՝ դժվար չէ նկատել մի քանի, հատկապես գլխատառերի, խոտորումների, որոնք թույլ չեն տալիս անխաբ համարել առաջին տպավորությունը: Ուստի հնարավոր ենք համարում նաև, որ գործ ունենք ոչ թե հեղինակի ինքնագրի, այլ սրա հին ընդօրինակություններից մեկի հետ, որոնք արվում էին հրապարակախոսի բարեկամների կողմից և օգտագործվում նրա հակառակորդների դեմ, որպես պայքարի ընդհատակյա զենք: Տպագրության հանձնելով պամֆլետի մեր կազմած տեքստը՝ հիմք ենք ընդունել «Մեղուն»-ի տպագիր օրինակը՝ վերածելով այն նոր ուղղագրության:²

Ինչպես ցույց է տալիս «Մեղվում» տպված պամֆլետի վերնագիրը՝ դրա նյութը հանրահայտ Գաբրիել Այվազովսկի վարդապետն է, ավելի ճիշտ՝ Նոր-Նախիջևանի եկեղեցագումարների և Թեոդոսիայում հիմնված խալիբյան

¹ Զեռագիրը բաղկացած է երկու երեսի վրա դրված գրասենյակային ութ լավ պահպանված, բայց դեղնած և դիրք խուռացած թերթերից: Թերթերի վերել ձախ անկյունում կա գործարանային ելունդավոր կնիքը՝ «Фабрика Сергеева № 7»: Հայտնի չէ թե երբ կամ ինչպես է ընկել այս վավերագիրը Մատենադարանի արխիվը: Հայտնի է միայն, որ դա չի մասել Սինոդի գործերի կամ Գոթոդիկոսյան դիվանի թղթերի մեջ, այլ պատկանում է այն վավերագրերի թվին, որոնք կուտակվում էին էջմիածնում մասնավոր մարդկանց պատկանած հավաքածոներից:

² Փակագծերի մեջ անում ենք աննշան ուղղումներ, իսկ էջերի տակ նշում ձեռագրի կարևոր տարբերակները: Վերջում դետեղում ենք մեր ծանոթագրությունները: Որչափ որ մեր առաջարկած տեքստը արժեք կարող է ստանալ հեղինակի ինքնությունը պարզելուց հետո միայն՝ անհրաժեշտ ենք համարում նախապես հաղորդել դրա շուրջը մեր դիտողությունները՝ հիմնված պամֆլետի բովանդակության աղբյուրների, դրական առանձնահատկությունների և գրության հանգամանքների քննության վրա:

դպրոցի կապակցությամբ 1857—1865 թվերին Մատթեոս Չուխաճյան կաթողիկոսին նրա ցույց տված դիմադրության աղմկալի պատմությունը: Վարդապետի և կաթողիկոսի բախումը դուրս էր գալիս եկեղեցու նեղ շրջանակներից և ի հայտ բերում ոչ միայն եկեղեցու և ցարիզմի փոխհարաբերությունները, այլ նաև ժամանակի արևելահայ և արևմտահայ դասակարգային խմբավորումների ու քաղաքական հոսանքների կողմնորոշումները:

Մեզ համար ամբողջ այդ պատմության մեջ հարցասիրության առարկա կարող է լինել միայն Միք. Նալբանդյանի և նրա գլխավորած հայ ուղղուցիոն-դեմոկրատական հոսանքի դիրքավորումը:

Հայտնի է պայքարի վճռական այն գիծը, որ տանում էր վարդապետի և նրան հովանավորող հասարակական-քաղաքական ուժերի դեմ մեծ հրապարակախոսը, սկսած այն վայրկյտնից, երբ քանիցս դավանափոխ եղած Այվազովսկին, ժամանելով Ֆրանսիայից Ռուսաստան՝ անցավ քաղաքական իր «միսիայի» կատարման: Հատուկ հրամանագրով նշանակելով նրան Նախիջևանի և Բեսարաբիայի հոգևոր առաջնորդ ցարական կառավարությունը կամենում էր ծառայեցնել նրան իր շահերին:

«Մեղվի» էջերում տպված պամֆլետը հետաքրքրական է այն տեսակետից, որ լուսաբանում է պայքարի վերջին այն էտապը, որի մասին քիչ նյութ են տալիս հրապարակախոսի մինչև հիմա հայտնաբերված գործերը: Պամֆլետի հեղինակը նշավակում է Այվազովսկու ընթացքը այն քննության նկատմամբ, որ՝ ընդառաջելով ժողովրդական բողոքներին, հարկադրված եղավ նշանակել կաթողիկոսը՝ 1863 թվի վերջերին, վարդապետի եկեղեցական-վարչական գործունեության մասին: Նշելով այդ բողոքների պատճառները, հեղինակը թվարկում է եկեղեցական այն «խորհուրդներն» ու ծեսերը, որոնք հարկի տակ էին մտնում այս վիճակավորի օրոք՝ նրա «մարաական-հոգևոր գործունեության» հանգրվան հանդիսացող խալիբյան դպրոցի գոյությունն ու վարդապետի բարեկեցությունն ապահովելու համար: Պամֆլետի մեջ նկարագրված է քննիչ եպիսկոպոսի դեմ Այվազովսկու կազմակերպած այն խանգարչությունը, որ սկսվել էր 1863 թվի վերջերից: Հրաժարվելով որևէ բացատրություն տալ իր գործունեության մասին՝ Այվազովսկին հայտարարում է, թե պաշտոնավարում է ցարի հրամանով, ուստի և առանց ցարի հաճության կաթողիկոսն իրավագոր չէ հաշիվ պահանջել իրենից:

Պամֆլետի հեղինակը նշավակում է Այվազովսկուն և մատնանշում նրա պատճառաբանությունների իրավաբանական տկարությունը: Ցարի հրամանով նշանակված բոլոր պաշտոնյաները, ասում է նա, ենթակա են իրենց վերադաս օրգանների տեսչությանը և պատասխանատու ու հաշվետու են նրանց առաջ՝ իրենց գործողությունների համար: Ըստ օրենքի հայոց առաջնորդների դեմ եղած բողոքները քննարկում է էջմիածնի Սինոդը, որի ատենապետը ամենայն հայոց կաթողիկոսն է:

Սակայն սոսկ իրավաբանական փաստարկումներով չէ, որ պայքարում էր Այվազովսկին կաթողիկոսի դեմ: Հակառակորդների, մանավանդ Նալբանդյանի «վտանդավորության» մասին նա գաղտնի գրություններ էր հղում ցարական օրգաններին: «Հազար սուտ, բյուր զրպարտություն՝ ըստ ամենայնի ձրի տալով, ռսես թե՛ լսսի «անանուխը և շամանը տասանորդողը չէ» — հարում է սրամտորեն պամֆլետի հեղինակը: Նույնպիսի զրպարտություններ է հղում նա կոմս Սիվերսին՝ այլադավանների հոգևոր գործոց դեպարտամենտի պետին՝

Այվազովսկու «արարչին»։ 1858 թվից ի վեր ահա վեց տարի է գաղտնի այդ նամակի բովանդակությունը կրկնվում է. «Կրնանք ըսել թե տարին ալ՝ էն քիչը, չորս հատ տարվան ամեն մեկ եղանակին համեմատ, կղրկե» — գրում է հեղինակը։ Ֆրանսերեն գրված գաղտնի այդ նամակի օրինակները — հակառակ վարդապետի ցանկության — անցնում են ձեռքից-ձեռք, և եթե Մեչուխեշան (Սըվաճյանը), համաձայն իր խոստման, հրատարակության տա դրա բնագիրն ու թարգմանությունը՝ «ընթերցող հասարակությունը ոչ միայն առիթ կունենա մեր աղավաճման վարդապետին բերնին սկրթունքը, այլև քիչ մը մեր սուրբ հոր ներսի դին ալ տեսնելու, քանզի մատնության և դավաճանության ասպարեզին մեջ միայն վայր կդնե ան իր դիմակը»։ Զրպարտելով հակառակորդներին որպես «պետության թշնամիներ», Այվազովսկին սրում է իր մեղադրանքը մանավանդ Նալբանդյանի դեմ, «որ ամենուն խզումիշ կընե եղեր», «տերության հայտնի է եղեր», «բերդը կպահվի եղեր» և այլն, և այլն։ Հօրինակ այլոց նրա կորուստը մեծ օգուտներ պիտի բերի պետության։ Մեղադրելով հակառակորդներին՝ Այվազովսկին նպատակ ունի անուղղակիորեն արդարանալ պետության առաջ՝ իր հուզած ժողովրդական տրտունջների և ի վերջո նաև՝ իր գործունեության շնչին արդյունքների համար։

* * *

Ո՞վ էր պամֆլետի հեղինակը։

Աչքի առաջ ունենալով գրվածքի արևմտահայ լեզուն կամ նրա երգիծաբանական ժանրը՝ կարելի էր կասկածել հենց հանդեսի խմբագիր Սըվաճյանին կամ նրա մշտական «լրաբերին» — Մեչուխեշային, որի մասին նույնիսկ ակնարկ կա պամֆլետում։ Այդ նույն կարծիքին կարելի էր հանգել աչքի առաջ ունենալով, որ «Մեղվում» տպված անստորագիր գրվածքները պատկանում էին հենց խմբագրի գրչին։ Հարկավ տարակուսանք կարող էր առաջացնել հեղինակի բացառիկ իրազեկությունը, նրա հատուկ մարտական թափն ու մտքի պայծառությունը, որ անսպասելի պիտի թվային Սըվաճյանի համար։

Որ Սըվաճյանը չէ պամֆլետի հեղինակը՝ ակներև է. ձեռագիրը տպագրության հանձնելուց առաջ «Մեղվի» խմբագիրը փոխում էր նրա ուղղագրությունը։ Նորահայտ ձեռագրի և «Մեղվում» տպված տեքստի միջև կան ուղղագրական օրինաչափ տարբերություններ։ Ինչպես իր ազգանվան բաղաձայնների, այնպես և մյուս բառերի միջև Սըվաճյանը խցկում է «ըթ»-եր, որոնցից ազատ է նորահայտ ձեռագիրը։ Այսպես նաև պամֆլետի տպագիրն ունի «զըրկվեցալ», «սկըսված», փոխանակ ձեռագրում եղած «զրկուեցալ»-ի, «սկսուածի» և այլն։ Տպագիրը բայերից զատում է «չը» բացառականը կամ «նէ» պայմանականը, մինչդեռ ձեռագրում դրանք միացված են։ Չայնավոր բառերից առաջ ձեռագիրը չի սղում անորոշ «մը» հոդը, մինչդեռ տպագիրը սղում է կատարում ապաթարցով. ձեռագրում կա «բան մ' ունենալ»՝ «բան մը ունենալ»-ու փոխարեն։ Չայնավորով սկսվող բառերից առաջ տպագիրը երբեմն դնում է «ն» հոդ՝ փոխանակ ձեռագրում եղած «ը»-ի և այլն։ Ձեռագրի ուղղագրական այս հատկությունները համապատասխանում են Նալբանդյանի մեզ ծանոթ ինֆեյդիտների առանձնահատկություններին։ Ծիշտ է, նորահայտ ձեռագիրը ազատ չէ նաև ուղղագրական որոշ անհետևողականություններից, սակայն նման անհետևողականություններից ազատ չեն նաև Նալբանդյանի

ինքնագիրները: Այսպես՝ բանտի ինքնագիրների մեջ իսկ «վեժի» կամ «հյունի» հարցում Նալբանդյանը շունի ըստ ամենայնի միասնական ուղղագրություն: Օրինակ՝ «տուած»-ի կողքին հաճախ գրում էր նաև «տված»¹: Նույն անհետևողականությունը կարելի է դիտել նաև մեզ զբաղեցնող ձեռագրի մեջ, որտեղ «հարսնացուի» ձևի կողքին հանդիպում ենք նաև «հարսնացվի» ձևը:

Տպագիր և ձեռագիր տեքստերի համեմատությունը ցույց է տալիս, որ ընդօրինակողը ձեռագիրը չէ, այլ, ընդհակառակը, տպագիրը: Ստանալով հեղինակի ձեռագիրը՝ խմբագիրն արել է դրա մեջ լրացումներ ու շտկումներ, որոնք ըստ երևույթին չեն եղել սկզբնագրում: Այս ևս ակներև է դառնում տպագրի և ձեռագրի հանդիպադրումից:

Ձեռագրի և տպագրի հանդիպադրումը ցույց է տալիս նաև, որ, չնայած հեղինակի ցանկության՝ գրել «Մեղվի» լեզվով՝ մի շարք դեպքերում անգիտակցաբար կամ անուշադրությամբ նա արել է գրչի վրիպումներ: Ընդ որում, պատահական չեն այդ վրիպումները. արևմտահայ լեզվով գրող հեղինակն արել է արևելահայ լեզվին հատուկ խոտորումներ: Հարկ եղավ, որ խմբագրությունն ըստ կարելույն շտկեր այդ խոտորումները: Կարծում ենք՝ դժվար չէ նկատել այդ՝ համեմատելով մեր կազմած տեքստը էջատակի նշումների հետ:

Այնուամենայնիվ տպագրած տեքստի մեջ շուրանակեցին մնալ բնագրի արևելահայ որոշ ձևերը: Այսպես, տպված է «կճանաչէ», փոխանակ՝ «կճանչնա», տպված է «կտա» — փոխանակ՝ «կուտա». կամ օրինակ՝ տպված է՝ «ոչ մեկ պաշտոնյա մը շունի այս արտոնությունը», մինչդեռ արևմտահայերեն ընդունված է գրել՝ «ոչ մեկ պաշտոնյա ունի այս արտոնությունը»:

Հեղինակի արևելահայ ծագումը հավանական է դառնում արդեն իսկ այն հանգամանքից, որ պամֆլետի ունագրությունը գրված է ռուսական թղթի վրա և կամ որ այդ գրությունը հայտնվում է էջմիածնի նախկին կաթողիկոսական դիվանի գործերում: Սակայն այդ մասին կա շատ ավելի շոշափելի վկայություն, այն է՝ գրվածքի բովանդակությունը:

Պամֆլետի հեղինակը հաղորդում է «Մեղվի» ընթերցողներին այնպիսի մանրամասնություններ, որոնց տեղյակ կարող էր լինել միայն Այվազովսկու գործունեությանը գիտակ մի արևելահայ: Հեղինակը մոտիկից տեղյակ է Նախիջևանի և Բեսարաբիայի լուսավորչահայ համայնքների թեմական գործերին և մասնավորապես Խալիբի դրամական շարաշահումներին՝ սկսած Մատթեոս Վեհապետյանի (1846—1857), Այվազովսկու նախորդի, Ժամանակներից: Հետաքրքրական է, որ ուշադրության կենտրոն դարձնելով Այվազովսկու գործունեությունը՝ հեղինակը չի անգիտանում նրա հոգևոր զինակցին՝ Խորեն Գալֆայանին՝ երկրորդ պլանի վրա ուրվագծելով պապականությունից հայ լուսավորչական դարձած վեղարավոր այս աշխարհաքաղաքացու զավեշտական պատկերը: Այվազովսկու այդ ուղեկիցը երգիծանքի նշավակ է դառնում պամֆլետում: Ազգային եկեղեցու փարախը դարձած «ալաֆրանկա» վարդապետը հրապարակ է գալիս որպես մալթոսյան «էկոնոմի բոլիթիքի» հետևորդ:

¹ Հստակ «նստիսկ երկերում» կամ «Երկերի լիակատար ժողովածուի» մեջ զետեղված «Սոս և Վարդիթերի» կրիտիկայի կամ «Բերդի հիշատակարանի» ինքնագիրներից վերցված նմանահանությունները:

Պամֆլետի հեղինակը շեշտում է այն դիմադրությունը, որին հանդիպեց Այվազովսկու գործունեությունը՝ ըստ երևույթին իրեն լավ ծանոթ Մոսկվայի և Պետերբուրգի հայերի կողմից, որոնց տրամադրություններին բացառիկ կարեւորություն է տալիս:

Հեղինակը լիովին տիրապետում էր ուսերենին: Յարական օրենսգրքի հատորներն առջևը՝ իրավագիտության դասեր է տալիս հակառակորդին: Տիրապետում է նաև թուրքերենին. այդ են վկայում գրվածքի թուրքերեն բառերը, ոճերն ու դարձվածքները: Հանդիպում ենք նույնիսկ լատիներեն, անգլերեն և ֆրանսերեն բառեր ու դարձվածքներ: Հատկապես ֆրանսերենին հեղինակը տիրապետում է այնչափ, որ հեգնում է նույնիսկ ֆրանսերեն լեզվով օրագիր խմբագրած Այվազովսկու ֆրանսերենը:

Ակներև է, որ պամֆլետի հեղինակը բազմակողմանիորեն կրթված անձնավորություն է: Ձեռքի տակ ունի աստվածաշունչը, որից մեջբերումներ է անում, գուցե գիտե «Մաշտոցն» ու «Նարեկը»: Օրինակներ է բերում հայոց և ընդհանուր պատմություններից, ծաղրում է Մալթուսի տեսությունը, երգիծանքով վերհիշում Արիստոտելի ուսմունքը կատեգորիաների մասին և այլն:

Այս ամենից զատ՝ պիտի աչքի առաջ ունենալ հեղինակի սուր տրամաբանությունը, հակառակորդներին հարվածելու եռանդն ու կիրքը, աշխույժ և երգիծող լեզուն: Գրվածքի մեջ, սկզբից մինչև վերջ, աչքի է ընկնում ամենակարևորը՝ հեղինակի ունեցիտն-դեմոկրատական գաղափարախոսությունը:¹

Նման մի գործ կարող էր գրել Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական գործերին քաջածանոթ մի մարդ, խալիբի անհաշտ մի հակառակորդ, Այվազովսկու քսությունները մերկացնող մի հրապարակախոս, իսկ նորեկ Գալֆայանի «Վարդենիքը» խարազանող մի հեղինակ, ժամանակի առաջավոր գիտությանը նվիրված մի լուսավորիչ և ուսուցիչ ունեցիտն շարժմանը լծորդված մի տրիբուն, որը նոր ուղիներ էր բացում հարազատ ժողովրդի ազատագրման համար:

1864 թվականին, երբ գրվում էր այս պամֆլետը, հայ իրականությունը ճանաչում էր այսպիսի մի մարդու՝ Միքայել Նալբանդյանին:

Որ պամֆլետի հեղինակը Նալբանդյանն է՝ այդ պարզվում է ոչ միայն գրվածքի ընդհանուր բովանդակությունից, այլև բանասիրական մի շարք մասնավոր դիտողություններից:

Հեղինակը «մեծարում է» Այվազովսկուն «վերապատվելի» տիտղոսով: Սակայն յուրահատուկ բույր ունի այդ «մեծարանքը»: Այդպիսի տիտղոս տրվում էր միայն կաթոլիկ (կամ բողոքական) կղերին: Հրամցնելով Այվազովսկուն այդ տիտղոսը՝ պամֆլետի մեջ կրկնվում է կաթոլիկամտության այն մեղադրանքը, որ ձևակերպված է Այվազովսկու «Վարդապետարանի» մասին Նալբանդյանի գրած նամակներում:² Մի այլ տեղ պամֆլետի հեղինակը դիմում է հակառակորդին «Գաբրիկ» անունով: Նվաստացուցիչ այդ անունով դիմում էին Այվազովսկուն միայն երկու հեղինակ՝ Ստ. Ոսկանյանը և Միք. Նալբանդյանը:

Կամ՝ ուշադրության առնենք այսպիսի մի «մանրուք»: Պատմելով խալիբի և Այվազովսկու դրամական շարարկումների մասին, հեղինակը բերում է մի շարք թվարկումներ ու հաշիվներ, որոնք նույնությամբ կրկնված ենք գտնում 1864 թ. հունվարի 1-ին բանտում գրված Նալբանդյանի մի նամակում՝ ուղղը:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 312:

ված Ան. Սուլթանշահին: Այդ նամակում պատմված են նաև Մատթեոս Վեհապետյանի դրամական այն օպերացիաները, որոնց մասին գրում է նաև պամֆլետի հեղինակը:¹

Ի վերջո մի այլ «մանրուք» ևս:

Պամֆլետում խոսվում է ինչ-որ երիտասարդ Խ.-ի մասին: Կարծում ենք, որ այստեղ հեղինակը նկատի չունեւ անհայտ երիտասարդի անվան կամ ազգանվան ինիցիալը: Այստեղ, ինչպես և Կոմս էմմանվելի «Հիշատակարան»-ում «Խ» տառի կիրառումը համապատասխանում է հունարեն Χ (իքս) տառի պայմանական դործածությանը՝ շնչելով կոնկրետ որևէ անուն:

Հատկապես կարևոր ենք համարում մի այլ զուգահեռություն: Մարդկային ուղեղի և սպունգի արիստոտելյան այն նմանեցումը, որ նշված է պամֆլետում, վաթսուհակաթ թվականների հայ գրականության մեջ հանդիպում ենք միայն Նալբանդյանի մոտ և տյդ դարձյալ՝ բանտի գրվածքներում: «Հայտնի է, թե Արիստոտելի փիլիսոփայությունը շիկանում է մինչ նա ուղեղը նմանեցնում է սպունգի: Ոչ միայն մեղադրելի չէ նա այդ մասին, ոչ միայն պախարակելի չէ, այլ դարձյալ զարմանալու արժանի մարդ է, որովհետև նորանից առաջ ուղեղի համար քար էլ է ասող չէ եղած...», — գրում է Նալբանդյանը «Հեգելը և նորա ժամանակը» հոդվածում: Եղբորը ուղղած մի նամակում նա ասում էր դարձյալ. «Քսաներորդ և հաջորդ դարերի մանուկը հավանորեն պիտի ժպտա Բերցելիուսի, Լավուազեի, Լիբիխի և Ֆրեզենիուսի վրա, ինչպես որ դու ժպտում ես փիլիսոփաներից մեծագույնի՝ Արիստոտելի վրա նրա՝ ուղեղը սպունգի հետ համեմատելու համար...»:²

Այս ամենից հետո հասկանալի է, երբ պամֆլետի հեղինակը ժպտում էր մտավոր այն մանուկների վրա, որոնք արիստոտելյան նմանեցումը հրամցնում էին ժամանակակիցներին, որպես գիտության վերջին խոսք: «Խորեն վարդապետը, — գրում է պամֆլետի հեղինակը, — իր բնախոսական (ֆիզիոսոփիք) դասերուն մեկուն մեջ Արիստոտելին հետևելով՝ ըսած էր, թե մարդու ուղեղը սպունգի նման բան մ' է. ասոր վրա որչափ որ գայթակղեր էին նե ալ՝ անդամադննդներ և բնախոսություններ դուրս՝ կրնա ընդունվիլ Արիստոտելի ըսածը Այվազովսքիի ուղեղին վերաբերմամբ: Նալբանդյանի և պամֆլետի հեղինակի մոտավոր այս զուգահեռությունը պարզ պատահականություն չէր, անշուշտ:

Բանասիրական այս կտրդի փաստերը բացօրկում են հնարավոր այն ենթադրությունը՝ թե Նալբանդյանից զատ պամֆլետի հեղինակը կարող էր լինել արևելահայ որևէ այլ անձնավորություն:

Բայց թե, հիրավի, Նալբանդյանն էր պամֆլետի հեղինակը՝ դրան համոզվելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ կարգի արգումենտներ. նկատի ունենք պամֆլետի դրություն հանդամանքները և ի վերջո՝ հեղինակի հետամտած հասարակական-քաղաքական նպատակը, ինչպես նաև սենատական նրա դատաքննության հետ կապված կարևոր մի մոմենտ, որ հավանորեն անմիջական շարժառիթ էր հանդիսանում պամֆլետի գրության համար:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 214:

² Հմմտ. նույն տեղում, հատ. 1-ին, էջ 303:

³ Նույն տեղում, հատ. 3-րդ, էջ 300:

⁴ Նույն տեղում, հատ. 4, էջ 214 և հետ:

* * *

Պետրոպալովյան բերդում նստած՝ Նալբանդյանը շարունակում էր իր աշխույժ հետաքրքրությունը հասարակական-քաղաքական անցքերի, այդ թվում նաև Այվազովսկու գործերի քննությունը ստանձնած եպիսկոպոսի գործողությունների նկատմամբ: Քննձ շատ հետաքրքրում է Անդրեաս սրբազանի Նախիջևան գալը, — գրում էր նա 1864 թվի հունվարի 1-ին Անանիա Սուլթանշահին, — մանավանդ որ այդ վերաբերում է և եկեղեցական գումարների գործին, որոնց համար, — ահա, կարելի է ասել, 15 տարի է արդեն ինչ մենք պատերազմ ենք մղում: Ո՞վ գիտե, գուցե այդ գործի ժամն արդեն հասել է... Համենայն դեպս, ճշմարիտ է մեր գործը, առավել ևս՝ աներեսպաշտ արդարության դեպքում»¹:

Այվազովսկու մասին Նալբանդյանը տեղեկություններ էր քաղում ոչ այնքան արևելահայ պարբերաթերթերից, — ի դեպ այս պահին քանակապես նվազած, — որքան ա՛յն այցելուներից, որոնց անուններն արձանագրված են «Բերդի հիշատակարան»-ում: Նույն այդ բարեկամների միջոցով հրահանգներ էր հղում նա համախոհների անելիքների մասին: Վարդապետի մասին նշանակված քննությունը անմիջապես արդյունք էր հենց այն ուղևորության, որ կատարեց Նալբանդյանի բարեկամ Սուլթանշահը դեպի էջմիածին»²:

Սենատական հարցաքննությունն ավարտվելուց հետո՝ 1863 թվի սկզբներից՝ բերդի կալանավորը միջոց ստացավ կարգալ անգամ արևմտահայ թերթեր: Ծանոթանալով այդ տարվա արևմտահայ պարբերականների և առաջին հերթին՝ «Մեղվի» համարներին, համոզվում ենք, որ բացառապես դրանց հիման վրա գրի առավ նա «Ազգային թշվառություն» հոդվածը:

1864 թվի փետրվարի 11-ին Նալբանդյանը թույլտվություն ստացավ հոդվածներ գրել՝ մամուլի օրգաններում տպելու համար, պայմանով, որ դրանք նախապես ենթարկվեն 3-րդ բաժանմունքի քննության: «Մեղուն» անմիջապես տեղեկանք տպեց այս մասին. փետրվարի 25-ի համարում, հաղորդելով «Հյուսիսափայլ»-ի վերահրատարակման լուրը, թերթը գրում էր. «Խնչպես միշտ, այնպես էլ հիմա, պ. Մ. Նալբանդյանցը գործակից է Հյուսիսափայլին, և անոր հոդվածները ամեն թվին մեջեն ալ պիտ չպակսին: Սակայն ասկե չպիտի հետևեն, թե անի ազատված է հիմա. չէ, Բեդեսպարկի մեջ, սուրբ Պետրոսի բերդը կը գտնվի, բայց իրեն թույլտվություն եղած է այժմ հրատարակության մասնակից ըլլա: Անշուշտ իր գրվածքները Մոսկվա՝ Օրագրի խմբագրությունը հասնելեն առաջ, քանի մը խիստ քննությանց ենթակա պիտի ըլլան»:

«Քանի մը խիստ քննությունքը» չափազանց դաժան եղան հրապարակախոսի համար: Նրա գրած հոդվածներից մինը՝ «Սոս և Վարդիթերի» կրիտիկան՝ գրվանի տակ մնաց ուղիղ 70 տարի: Արտակարգ ինչ որ հնար գործ դնելով՝ Նալբանդյանը կարողացավ «Հյուսիսափայլի» խմբագրի ձեռքը հասցնել «Ազգային թշվառություն» հոդվածը. նազարյանցը հնարավոր համարեց տպել հոդվածը ոչ թե հեղինակի, այլ ի՛ր ստորագրությամբ: Մեղուսեչային ուղղված «Ուղերձը» «Հյուսիսափայլ»-ը տպեց հեղինակի նորահայտ կեղծանունով միայն:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 237:

² Նույն տեղում, էջ 290 և 293:

³ Մ. Նալբանդյան, Անտիպ հրկեր, էջ 304, ծան. 19:

Այս հանգամանքներում է, որ հասունանում էր նաև Այվադովսկու մասին գրվելիք պամֆլետը և այն «Մեղվի» էջերում հրապարակելու միտքը: Այվադովսկու դեմ «Մեղում»-ում գրելու միտքը բնական պիտի լիներ թեկուզ հենց այն պատճառով, որ ցարական ցենզուրայի պայմաններում անհնարին կլիներ ելույթ ունենալ վարդապետի դեմ՝ Ռուսաստանում:

Առաջին անգամը չէ, որ Նալբանդյանը անհրաժեշտ էր համարում մերկացնել այդ հակառակորդին արևմտահայ ընթերցողների առաջ: Վարդապետի դիմակը նա պոկում էր տակավին 1861 թվին՝ «Նրկու տող» քրոշյուրում: Բրոշյուրի աւմիջական նշավակը Չամուռճյանն էր և՛ Այվադովսկին:

Սակայն սրանց չէ, որ հեղինակը ցանկանում կամ կարող էր հաղորդակից անել իր մտքերին ու հույզերին: Հրապարակախոսը պիտի համոզված լիներ, որ հակառակորդների սխուլաստիկ տրամաբանությանն անմատչելի է կենդանի իր խոսքը: Զուր չէ, որ «Սոս և Վարդիթերի» ծանոթագրություններից մեկում, արևմտահայերեն փոխելով Չամուռճյանին ուղղված իր խոսքը՝ հարցնում էր բազմագետ պատվելիին՝ «Կրցա՞նք հասկցնել»: Մյուս հակառակորդի առաջ դրված բնորոշ նման հարցումով էր ավարտվելու նաև «Կտոր մը Այվադովսքիաբանություն» պամֆլետը:

1863—1864 թվականներին ժողովրդական մասսաները և լիբերալ-պահպանողականները կանգնած էին դեմ առ դեմ՝ որպես հակամարտ բանակներ: Ժողովրդի և լիբերալների սահմանազատումը երևան էր գալիս մասնավորապես նաև Այվադովսկու հարցում:

Նալբանդյանը լիովին ըմբռնել էր արևմտահայ կյանքում տեղի ունեցող իրադարձությունների բնույթը և անդրադարձել դրանց տակավին արտասահմանում հրապարակած իր գրվածքներում: Որ այդ իրադարձությունները հուզում էին նրան նաև հիմա՝ այդ երևում է «Ազգային թշվառություն» հոդվածից, որտեղ անխնայաբար ցած էր առնում արևմտահայ լիբերալների դիմակաները: Հասկանալի է, թե ինչու, ավարտելով լիբերալներին ուղղված իր խոսքը՝ հրապարակախոսը պահանջ էր զգում հիմա՝ գրել կղերա-բուրժուական ռեակցիային հակադրված արևմտահայ մասսաների համար և նրանց մատչելի լեզվով:

Ի վիճակի էր արդյոք Նալբանդյանը՝ շարադրել իր գրելիքը արևմտահայ մասսաներին մատչելի լեզվով: Այդ հարցին կարող ենք տալ դրական պատասխան: Նալբանդյանն ուներ դրսև համար բոլոր տվյալները: Նրա մայրենի լեզուն պատկանում էր այսպես կոչված «արևմտահայ» կամ՝ «կը»-ական բարբառների շարքին: Արևմտահայ բարբառներ, արևմտահայ գրական լեզուն լսելու կամ դրանցով խոսելու առիթներ էր ունեցել Քիշնևում, Ղրիմում, Օդեսայում ծառայելիս, կամ հետադադրում, արտասահմանյան ուղևորությունների ժամանակ, արևմտահայ մարդկանց հետ շփվելիս: Պատահական չէ, որ Նալբանդյանն էր հենց, որ ուղիներ էր որոնում հայ երկու գրական լեզուների միավորման համար: «Ազգային թշվառության» մեջ երևան է գալիս նրա հետաքրքրությունը դեպի արևմտահայ ֆելետոնը, մասնավորապես դեպի Սըվաճյանի հրապարակած «Թուրֆանտա և Տորոդիա տուտունների նամակները»,¹ «Շողեր խաթունին տնակն ու իր ողորմելի քիրաճին»,² «Գիշերը և Մշո դաշտ»-ը³ և այլն: Խոսեցնելով հակառակորդներին, հեղինակը դնում էր նրանց բերաններում արև-

¹ «Մեղու» 1863, №№ 211, 212:

² Նույն տեղում, 1863, № 226 և 1864 № 240:

³ Նույն տեղում, № 226:

մտահայ ռեպրիկներ, որոնց շարադրողն ինքն էր հենց»¹—«Մո, Մեղուն բավական չէր գլխունուս, սա Հյուսիսափայլն էլ ուրկե ելավ»,— ասում էր դրանցից մեկը: Կարդալով այս բացականչությունը՝ ակամա ուշադրության ենք առնում՝ «Կաոռ մը Այվազովսքիաբանություն» պամֆլետի վերջում՝ «Ժո, կենե շհասկանար Այվազովսքին. անի դարձյալ իր էջը կըջե...» խոսքերը:

Սակայն լեզվի հարցը կապված չէր սոսկ մասսաներին հասկանալի դառնալու մտահոգության հետ: Այն Նալբանդյանի հայացքների հետ լծորդված հարցերից մեկն էր միայն:

Որչափ ցարիզմը առաջ էր քաշել Այվազովսկուն՝ հայերի, և գլխավորապես արևմտահայերի համակրանքը նվաճելու դիտումով՝ Նալբանդյանը, ցարական ռեակցիայի դեմ մոբիլիզացնելով արևմտահայ դեմոկրատիայի ուժերը՝ ցանկանում էր, որ արևմտահայ մամուլի էջերից ևս սկսվի գրական մի արշավանք, որով ականերև պիտի դառնար, թե վարդապետի դեմ է տրամադրված ոչ միայն արևելահայ, այլև արևմտահայ ժողովրդի հասարակական կարծիքը: Քանի որ վարդապետի դեմ տարվող պայքարը մտել էր իր զարգացման վերջին փուլի մեջ, անհրաժեշտ էր, որ սաստկացվեին նրա դեմ արևմտահայ դրական ճակատի հարձակումները:

Բայց, անշուշտ, ընդհանուր-քաղաքական նպատակներից զատ պամֆլետի գրության համար Նալբանդյանն ուներ նաև մասնավոր, սենատական իր գործի հետ կապված շարժառիթ:

Դատական վճիռներ կայացնելիս հաշվի պիտի առնվեին քննչական օրգանների հավաքած «կարծիքներն» ու պետական նկուղներում կուտակված գաղտնի տեղեկություններն ու բնութագրումները: Նման նյութեր կային նաև Նալբանդյանի մասին: Նալբանդյանը գիտեր անշուշտ, որ իր դեմ ուղղված մեղադրանքը կապ չուներ Այվազովսկու քսությունների հետ: Բայց և անտեղյակ չէր, որ այս կարգի նյութերը ևս նժարի վրա պիտի դրվեին վերջին պահին: Գիտեր նա, որ իր համաքաղաքացիները հավաքական դիմումներ էին հղում իր օգտին, որ իր մասին համակրական հոդվածներ էին տպվում արտասահմանյան հայ առաջավոր թերթերում՝ Հնդկաստանում, Թուրքիայում կամ Ֆրանսիայում: Մասնավորապես «Մեղուն» է, որ տեղեկանքներ ու հոդվածներ էր տպում իր օգտին: Նալբանդյանը կարծում էր, ըստ երևույթին, թե արևմտահայ մամուլի էջերում Այվազովսկու դեմ լույս տեսնելիք իր պամֆլետը կարող էր ցանկալի ազդեցություն ունենալ սենատական դատավճռի վրա:

Բոլոր պարագաներում, անհրաժեշտ էր, որ ցարական օրգաններն ընկալեին զրկածֆր ուրպես արևմտահայ առաջավոր ճասարակական կարծիքի արտահայտություն:

Այս բոլորից հետո հասկանալի է, թե ինչու Նալբանդյանը նպատակահարմար գտավ հոդված գետեղել «Մեղում»: Պարզվում է, թե ինչու այդ հոդվածը պիտի գրվեր «Մեղվի» ընթերցողներին տռավել մատչելի արևմտահայ գրական լեզվով, թե ինչու հեղինակը պիտի խոսեր իր մասին երրորդ դեմքով կամ թե ինչու նրա գրվածքը պիտի տպագրվեր այդ հանդեսում՝ առանց ստորագրության: Գրվածքը պիտի շարադրված լիներ այնպես, որպեսզի ստացվեր այն տպավորությունը, թե դրա հեղինակը Սըվաճյանն է հենց, որը ներկա դեպքում սպասում էր նաև երկրորդ իր եսի՝ Մեղուխեչայի աջակցությանը:

Նալբանդյանի համար այս կետում չկա անհարիր որևէ բան: Գրական դի-

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակ. ժող. հատ. 3-րդ, էջ 167, 168:

մակավորումը հատկանշական է ուղղուցիղ-դեմոկրատական հրապարակագրության համար, և տակավին Կոմս էմմանուելն էր գանգատվում, թե «ես ներկարարի կարաս ունիմ... կենդանիք, որ ընկնեին այդ կարասի մեջ, երևում են այնուհետև ներկված և դժվարաճանաչելի ըրդավոր»:

Հայտնի է, որ Կոմսի հոգվածները տպվում էին հաճախ անստորագիր կամ այլազան ստորագրություններով: Գրական այս հնարով նա կամենում էր դարձյալ առաջացնել այն տպավորությունը, թե «Հյուսիսափայլ»-ը շատ թղթակիցներ ունի և կամ որ իր արժարժած մտքերը գտնում են հասարակական լայն արձագանք: Հարկավ, երբեմն նա այդ անում էր քաղաքական նկատառումներով կամ ցենզորական մաքսախուսության համար: Եթե պետք եղավ նույնիսկ, որ Նազարյանցը տպագրեր «Ազգային թշվառություն» հոգվածն իր ստորագրությամբ, այդ կատարվեց անշուշտ հեղինակի գիտությամբ ու ցանկությամբ: Նազարյանցը չափազանց պարկեշտ ու փափկանկատ էր անձնապես, որպեսզի թույլ տար իրեն՝ յուրացնել բանտում նստած աշխատակցի հոգվածը: Թող որ հոգվածը խորթ էր իրեն թե՛ լեզվով, թե՛ բովանդակությամբ:

Ուշադրություն դարձնենք նաև այն հանգամանքի վրա, որ «Ազգային թշվառություն» հոգվածում հեղինակը խոսում է ոչ թե իր, այլ «Հյուսիսափայլ»-ի խմբագրության անունից: Ձևականորեն դրանով էլ հենց պատճառաբանվում է Նազարյանցի ստորագրությունը: Սրանով մենք մոտենում ենք նաև Այվազովսկու դեմ ուղղված պամֆլետի առեղծվածին:

Տեսանք, որ, բերդում նստած, Նալբանդյանը կարդում էր «Մեղվի» համարները: Սակայն նա ոչ միայն կարդում էր «Մեղուն», այլև արձագանքում նրան: Ըշմարտությունից հեռու չէր «Արշալույս Արարատյան» թերթը, երբ հետագայում գրում էր թե «Ազգային թշվառություն» հոգվածը, «որ լի է կրյուք և ազգային երևելիները, պեյերը, էֆենդիները և հոգևոր հովիվները շարաշար կպախարակե... կերևի թե դադարյալ «Մեղու» լրագրին ներշնչությամբը դրված է»¹ Մի հայտնի չափով այդ հոգվածը գրվում էր հենց «Մեղուն» խափանելու համար՝ Քաղաքական ժողովի հանած որոշման դեմ: Առանց «Մեղվի» «ներշնչման» չէ գրվել մասամբ նաև Այվազովսկու դեմ ուղղված պամֆլետը: Բոլոր պարագաներում, եթե «Ազգային թշվառություն» հոգվածի հեղինակը կարող էր թաքնվել լիբերալ «Հյուսիսափայլ»-ի պիտակի տակ, «Կտոր մը Այվազովսքիաբանության» հեղինակի համար դժվար չպիտի լիներ քողարկվել գաղափարամերձ Սըվաճյանի գրական առագաստով:

Հավանական է կարծել, որ Սըվաճյանը շարունակում էր նամակագրության մեջ լինել բերդում նստած Նալբանդյանի կամ նրա մերձավորների հետ, և անհնարին չէ, որ պամֆլետի նյութը շոշափվել և նախապատրաստվել էր մասամբ հենց այդ նամակագրության միջոցով: Այս ենթադրության համար որոշ հիմք է տալիս մեզ պամֆլետի մեջ տրված այն ակնարկությունը, թե Այվազովսկու ֆրանսագիր քսության մի օրինակը կա Մեղունի ձեռքին, և՛ որ վերջինս «կիսոստանա օր մը անոր թարգմանությունը հրատարակել բնագիր ֆրանսերենին հետ»: Հավանորեն Նալբանդյանի կացության մասին «Մեղվում» տպվող քիչ թե շատ ստույգ լուրերը ևս ստացվում էին նույն նամակագրության ճանապարհով:

Պատահական չէ նաև, որ Նալբանդյանը նույն այս պահին էր հենց մտա-

¹ «Արշալույս Արարատյան», 1895, № 767:

բերում Սըվաճյանի գրական հնարները՝ հատուկ ուղերձ հղելով ծովերի ու ցամաքի արգելքները հաղթահարող ազգի անհամար թշվառությունները ամենուր տեսնող ու պատմող Մեղուխեչային...

Այսպիսով, պամֆլետի արևմտահայ կեղևից ելնում է Նալբանդյանի հրապարակագրության միջուկը՝ հայտ բերելով Պետերբուրգի կալանավորի և և պոլստիայ գաղափարական նրա բարեկամի գրական-ֆաղափական աշխատակցության նոր փաստեր:

* * *

Սըվաճյանն ըմբռնեց գրվածքի ամբողջ կարևորությունը: «Մեղու»-ի հերթական համարը պիտի լույս տեսներ դեկտեմբերի 30-ին: Սակայն խմբագիրը չկամեցավ այդքան երկար հետաձգել գրվածքը և այն տպեց հանդեսի հերթական համարից դուրս՝ դեկտեմբերի 5-ին՝ առանձին «Հավելվածով»: Պամֆլետի հրատարակության այդ եղանակը գրեթե աննախընթաց էր «Մեղու»-ի ողջ պրակտիկայում: Բացառիկ ուշադրության ցույց էր տրվում՝ դեպի հայ ռեզիդենտներ դեմոկրատիայի ղեկավարը, որը ցարական բանտապահների գլխի վրայով անգամ կարողանում էր հատուկ հարվածներ հասցնել ժողովրդի թշնամիներին:

«Մեղվի» պայթարն ապարդյուն շանցավ եթե ոչ հատկապես Նալբանդյանի, զեթ նրա հակառակորդի համար: Յարական կառավարությունն առիթ ունեցավ համոզվելու, որ պաշտպանելով Այվազովսկուն՝ հուզել է իր դեմ ոչ միայն արևելահայ, այլև արևմտահայ մասսաներին: 1865 թվի օգոստոսի 22-ին ցարը հարկադրված եղավ ազատել Այվազովսկուն թեմական կառավարչի պաշտոնից: Միաժամանակ որոշվում էր նաև հալիբյան դպրոցի բախտը: Այս մասին ցարին ուղղած իր զեկուցագրի մեջ ուշագրավ խոստովանություն էր անում պետական վիցե-կանցլերը: «Պոլսահայերի ներկա գրգռված վիճակում դեպի մեր կառավարությունը տածած ծայր թերահավատության հանդեպ, որ երևան են բերում նրանք վերջերս՝ հազիվ թե հաջողվի դեպի հալիբյան դպրոցը գրավել թյուրքահայ պատանիներին, եթե մենք հնարավորություն չտանք հայ եկեղեցուն, ի դեմս հայոց կաթողիկոսի, ըստ կարելույն մեծ ազդեցություն ունենա այդ դպրոցի վրա, մանավանդ որ այդ եկեղեցին նշանավոր գումարներ է ծախսել նրա հիմնադրման ու պահպանության վրա»:¹

Այս խոստովանությունը ցույց է տալիս Այվազովսկու վրա դրված ցարական կառավարության հույսերի լիակատար փլուզումը: Հարկավ մոլորվում էր ցարական բյուրոկրատը՝ կարծելով, թե հնարավոր կլինի փրկել ժողովրդից կտրված և ժողովրդին հակադրված դպրոցի անել կացությունը՝ նրա վարչությունը հակաժողովրդական մի օրգանից մյուսին փոխանցելու միջոցով: Նոր հսկողության տակ դպրոցը քարշ տվեց հազիվ մի-երկու տարվա դժգոլյն կյանք միայն: Երևաց, թե որքան ճշմարտացի էր «Կտոր մը Այվազովսքիաբանության» հեղինակը, երբ հակառակորդի քսությունների մեջ տեսնում էր նրա պարտության ազդանիշը: Դրանով, ասում էր Նալբանդյանը, նա կամենում էր ցարիզմի առաջ արդարանալ այն բանի համար, «թե իր տերության ըրած խոստմունքը... չկրնար արդյունացնել»:

Այվազովսկու պարտությունը սոսկ անձնական պարտություն չէր, այլ պարտություն այն քաղաքականության, որի մոլի սպասարկուներից մեկն էր նա:

Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

¹ ЦГ Архив. фонд. Мин. Ин. дел. 1869, отд. СПб. гл. арх. № 89, л. 50.

ԿՏՈՐ ՄԸ ԱՅՎԱԶՈՎԱՔԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝

Բանին դպրութիւնք, կարդին աթոռք, լինին
ահեղ դատաստանք: Վկայքն պսակին ըստ ճշնու-
թեանցն ու մեղաւորքն տանջին ըստ յանցանացն.
դատես դիւանագործն ու պապակին ուրացողքն
դժոխքն աղաղակէ ու սատանայ յասօթ լինի:

Մ Ե Ա Ր Ռ Ա Ղ Բ) 1)

«Մի եղէց անպտուղ ի փոքր վաստակոյս իրր
ապաղայն սեմանոց անբեր [բ]ի երկրի»

Ն ա ր Է Կ

Ընթերցող հասարակութեան հայտնի է Մեղուի հողվածներէն Այվա-
դովսքի Դարբինի 7) վարդապետին 1863-ին էջմիածին կանչվիլը ու անկե
ճամբվիլը²⁾ ուստի այս խնդիրը ձգելով, անկե ետքը պատահած քանի մի
անհերքելի իրողութեանց վրայոք պիտի խոսինք:

Այն միջոցին, որ մեր վերապատվելին³⁾ եպիսկոպոսութեան երազե-
լու վրա էր, մինչև անդամ (ասի աչքով տեսնողի մը վկայութեանն է)
«Արքեպիսկոպոս Դարբինի Այվագյան» ըսելով կնիք մ'ալ⁴⁾ փորեր 7) տվեր
էր, այն դժբախտ միջոցին Նախիջևանցոյ Ե) եկեղեցական հաշիվներուն
խնդիրը նորէն փրթալ. փրթալ և այս անգամ ավելի մեծ փոթորիկով:
Վեհափառ կաթողիկոսը ստիպվեցաւ վերջապես ականջ դնել ազգին անդա-
դար բողոքանաց: Գ) Այս որոշման հետեանքն է) այն եղաւ՝ որ Անդրեաս ե-
պիսկոպոսը իրեւ կաթողիկոսի պատգամաւոր Նախիջևան զրկվեցաւ՝ ման-
րամասնաբար քննելու համար թե՛ այն հին վեճը և թե՛ ընդհանրապես Այվադով-
սքի առաջնորդական տնտեսութեանը, որու մասին ալ, ինչպես ամենուն
հայտնի է, դանգատներուն ձայնը օր օրի կրարձրանար: Մեր առաջադրած
համառոտութեան սահմանը չներկր նե ալ՝ հարկը կստիպե, որ այս բողոք-
ներուն բովանդակութեանցը վրայոք քիչ մը տեղեկութեան տանք:

Հին ժամանակներե սկսած սովորութեան է ազգին մեջ քանի մը
դիւլալածներու առթով հոժարակամ տուրք մը տալ հանուն աթոռո՝ օրի-
նակ. մարդ մը թե որ պսակվելու ըլլտը, կամ թե որ մեկը վախճաներ, ա-
սոնց տերերը՝ իրենց սրտեն ինչ որ փրթեր նե՝ բան մը կնվիրէին: Այվա-
դովսքի առաջնորդ կոչվելեն ի վեր այս հոժարակամ տուրքը՝ անմերժելի
հարկի Ը) մ'էր դարձեր: Թ) Պսակվող մարդը Ժ) հոգեոր կառավարութեան կեր-

ա) Ձեռագրում չիք պիտի կարծել, որ «Մեղու»-ի սկզբնագրում այս վերնագիրը
եղել է:

բ) Ձեռագրում՝ Մ:

գ) Ձեռագրում՝ Գ:

դ) Ձեռագրում՝ փորել:

ե) Ձեռագրում՝ Նախիջևանու:

զ) Ձեռագրում՝ բողոքանացը բ):

է) Ձեռագրում՝ հետեանք:

ը) Ձեռագրում՝ հարկ:

թ) Ձեռագրում՝ դարձել:

ժ) Ձեռագրում՝ մարդ:

թարա) իր քահանայեն ղինքը պսակելու հրաման մը առնելու. բայց հողե-
վոր) կառավարութիւնը մինչև որ իր ուղած չափով և պսակողի կարողու-
թենենը) ալ վեր մեծկակ դումար մը չփրցներ նե հրաման տալը մտքեն
ալ չէր անցներ. յայտնի է թե՛ իր հրամանն ալ աժան ծախելու հարկ չու-
ներ. վասն զի բնավ մեկդ) քահանա մը չէր կրնար առանց հողեոր կառա-
վարութենեն զրավոր հրաման ունենալու պսակի խորհուրդը կատարել: Ա-
ռած դումարներն ալ՝ 3.5.10.15.20 և մինչև 50 և ավելի քարպովանց^{ա)}
Վերջին աղքատը պետք է որ 3 քարպովանց վճարել: Մտակ չունիմ, կա-
րողութիւն չունիմ, օրական մշակութիւնսմը ապրող մեկն եմ ըսելը, բնավ
պատճառ մը չէր. վասն զի կըսէին անոր. Տաղքատ ես նե ինչու կկարգ-
վիս, երբ որ հիմա 3. 5. արծաթ տալ չես կրնար նե, կնիկդ ինտորդ) պի-
տի պահես, աղքատին կնիկ պետք չէ՞:

Թե որ ժամանակները ուղածներուս պես ետե առաջ խաղցնելու կա-
րող ըլլայինք նե՛ չպիտի տարակուսեինք ըսելու թե՛ Անդդիո սքանչելի է-
քոնոմիստ Մալթուսը իր թեորիի զաղափարը ասոնցմե է ուսեր. վասն զի
անի, ինչպես որ Խորեն վարդապետն ալ իր էֆոնմի բօլիթիֆի (քաղաքա-
կան տնտեսութեան) դասերուն մեկուն մեջ ըսած էր, կքարողե թե՛ Տաղ-
քատը սեր չուղեր. ստակ չունիս մի՛ սիրելու ալ իրավունք չունիս:

Մարդկութիւնը Եվրոպայի մեջ ատեն մը խավար ժամանակե ան-
ցավ, երբոր տակավին շատ շոր և շատ կոպիտ կերպով կհիմնվեր ավա-
տական հարաբերութիւնքը իշխանի և ստրուկի մեջ: Այս խավարի և բար-
բարոսութեան մեջ էրիկ մարդիկ իրենց իշխանի զրոշի տակ ղինվորվելով,
անոր հողը մշակելով, անոր սոսկալի հարկերը վճարելով՝ իրենց պարտքե-
րը կկատարեին նե ալ՝ կանացի սեռն ալ հարկ մը կվճարեր անոր և արդի
հասկացողութեամբ խիստ զժվարալուրե^{բ)} ու անտանելի հարկ մը: Այս հար-
կը ան խավար ատենները երկար միջոց բնորեն վճարվեցավ նե ալ՝ ետքը՝
ժամանակի դատապարտութեան ներքո իյնալով՝ զրամական հարկի դար-
ձավ, որուն անունը մինչև այսօր (եիւս բրիմա նոֆտիս ըսելով) պատմու-
թեան մեջ ալ կհիշվի: Հարսնացվին հայրը, մինչև որ այս հարկը զրամով
չվճարեր նե՛ իշխանը հրաման չէր ըներ պսակելու անոր աղջիկը, որ ինչ-
պես ըսինք զրամական հարկի դառնալեն առաջ պարտական էր ինքը
բնորեն վճարել... Կըսվի թե Խորեն վարդապետը իր Խրիֆեօթի^{գ)} (հնախո-
սական) դասերուն մեկուն մեջ այս հարկին բնորեն վճարմանը հարակից
եղած պարագաները խիստ ազդու, կենդանի և շոշափելի կերպով նկարա-
գրեր է, բայց մեզի մութ է. մենք լսողաց ենք, ուստի և զանց կեննք
անի^{դ)}:

Մեր Այվաղովսքինդ) հայերու մեջ այս հարկը զրամական կերպա-
րանքով նորողեր էր տարբերութեամբ միայն, որ փեսացուն վճարե՛ փո-

ա) Տպագրում այստեղ կա ձեռագրում բացակայող այս ծանոթագրութիւնը՝ Ասի
երեք քահանայ բաղկացեալ ատեան մի է, որ Նախիջևանի մեջ եկեղեցական գործերուն
կնայի: Անոր անդամները ղնողը կամ փոխողը առաջնորդն է:

բ) կարողութենե:

գ) մին:

դ) Տպագրում՝ ինչով:

ե) Ձեռագրում գրված է նախապես «զժվարալուրե», բայց հետո փոխված՝ «լուրը»:

զ) Ձեռագրում՝ Այվաղովսքի:

խանակ հին հարսնացուին և ասի՝ ավելի պատշաճավոր կերևար անորա), նախ որ ժայր է գլուխ կնոջ, որպես և Կրիստոս գլուխ է եկեղեցւոյն, երկրորդ, ըստ որում վարդապետ մը չկրնար իդական սեռի հետ պաշտոնական հարաբերություն ունենալ, «զի նմա աշխարհ ի խաչ ելեալ է և նա աշխարհի»։ անի, ինչպիսի բարակ անդդիացիք կըսեն՝ օմիի ֆոքր մենդմեն:

Ամենքը գիտեն, որ հայերու մեջ պսակեն առաջ նշանտուք ալ կըլլա. մեր վարդապետն բ) Արիստոտելին հետեւելով տրամարանության մեջ տասը սեռ (fawթեկոսը) կընդունի նե ալ անով ալ զոհ չըլլալով՝ անկե զուրա շատ ուրիշ սեռեր ալ գտիրե. ուստի նշանտուքն ալ այն նոր սեռերուն մեկուն տակը կիյնար: Մեկը չէր կրնար նշանովի, մինչև որ հրաման չառնեք. ըսել է որ՝ մինչև որ հարկը չվճարեք ըստ վերոհիշյալ սակի:

Ննջեցալի մը կիրամուտքը (այսինքն յոթնօրյա կարգը) նույնպես առանձին հրամանի կկարոտեր, ըսել է թե չէր կրնար կատարվել դ), մինչև որ անոր ալ բաճը չվճարվեր: Ստակ չունիս մի, մեռելիդ ալ կիրամուտք պետք չէ. աղքատին մեռելը առանց կիրամուտքի ալ շատ աղեկ կրնա պառկիլ: Բայց թե որ ունի ու չտալիք կընես նե, զիտցած ըլլաս որ առանց կիրամուտքի մեռելը ուղղակի հոն կերթա, թուր որդն ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի: Անդին աղքատ մը աղի արտսուք թափելով թխիղճս կտանջե կոր, կըսե, ընտոր հորս կիրամուտքը չկատարեմ: Ուրիշ աղքատ մը ժմայր, կըսե, այնչափ երախտիք ունի վրաս, առանց կիրամուտքի պառկեցնեմ: «Ջափակս անխնդաց էր, կողրա այլի մայր մը, առեք սա գոտին ու սուռաթնուն դ) նետեցեք, դաւկիս կիրամուտքի հրամանը թող տան»:

Այս ամեն կիրամուտքներն ալ կկատարվին, ըսել է թե հարկերը կըվճարվին:

Մարդու մը հարկավոր է վկայական մը ունենալ իր ծննդյան և մկրտության համար, որ «չափաբերական վկայություն» կըսվի, և Ռուսիո մեջ շատ հարկավոր բան մ'է. վասն զի մեկը չկրնար տերության որ և իցե դպրոցը մտնել կամ պաշտոն մը ստանալ, մինչև որ ուրիշ կանոնավոր վկայադրաց հետ աս ալ կներկայացնե: Այս վկայականին զինը ավելի սուղի ելած էր, մինչդեռ անոր համար ոչ մեր և ոչ ուրիշ ազգերու մեջ երբեք բան մը վճարված էր: «Տղադ տերության դպրոցը պիտի գնես, կըսե տեր հայրը, հարկավ կարողություն պիտի ունենաս՝ որ ասի մտմտացեր ես. վասն զի ամեն տարի քանի մի հարյուր քառասունց ծախք ընելդ հայտնի բան մ'է: Ստակ չունիմ ըսել չես կրնար. չունիս նե՝ տղադ դպրոց մի գներ. բայց որովհետև ունիս ու կուզես որ աղուդ ալ կրթությունը կանոնավոր ըլլայ՝ մեծ բան է թե որ անդամ մը այս վկայականին համար 10, 20 և այլն քառասունց վճարիս»:

Առաջնորդը որ «դոդեոսն սերմանէ ի ձեզ մեծ ինչ է եթէ դմարմեաւորն հնծիցէ. չիցէ՞ րնաւ ընթերցեալ քո յօրէնսն թէ՛ ժմի կապեսցես զյոսուկ եղին կալոտույն»:

ա) Ձեռագրում՝ կերպով. (Այս «կերպով»-ը հեղինակը անուշադրությամբ մոռացել է ջնջել):

բ) Ձեռագրում՝ վարդապետը:

գ) Ձեռագրում՝ կատարվել:

դ) Ձեռագրում՝ սուռաթնին:

— Տեր հայր, դուք ի՞նչ աղեկ կճանաչեք ա) որ հորեւ որը մնացի և ի՞մ փոքրիկ եղբայրս ալ ի՞մ խնամարկութեանս ապաստան մնաց. դիտեք որ ես վաճառականի մը քով տարին 300 քառասունցով ծառայութեան կը նեմ. ասկէ 200-ը տարեկան եղբորս կրթութեան վրա պիտի դնեմ. մնացած 100-ով՝ ես ու մայրս պիտի աղքատորեն ապրինք. կաղաչեմ սա վկայականին համար ստակ մ'առնեք ինեմ. սա կըսե երիտասարդ Խ...

— Իլլե քի 25 քառասունց պիտի տաս:

Երիտասարդը կնայի որ չվճարած չպիտի ըլլա՝ արասուք թափելով կհանե կուտա իր աշխատութեան վարձքը ու թշվառ մորը հացագինը ու վկայականը վերջապես ձեռք կըբերի:

Ասոնց պես դեռևս ուրիշ շատք) բաներ, որ չենք ուզեք հիմակուհի-մադ) այս համառոտութեան մեջ գծագրել. սա միայն կավելցնենք, որ եթե հարկե ազատ մնացեր էր նե, անի եկեղեցի երթալն էր: Իրավ կըսենք որ մնացածը սա էր. ժամերու գուռը մարգ կեցնել ու մտնող ելնողին քյուրդ տերեպեյներուն քափքազ պաստմ պահանջել, իսկ չավողը ժամին դռնն դուրս ընել:

Խորհուրդ կտանք Այվադուքիին, որ չենե այս ասդերը յուր աշխարհածանոթ սախտութեամբ մերժել փորձե և մեզ ալ ստիպե իրեն բարոյականին վերջին և մահացու հարվածն ալ հասցնել: Այս ամեն ըսածնիս անուններով, թվով, ամսով և օրով կընանք ապացուցանել, թող աչք բանա: Մեր ըսածները Նախիջևանի բողոքներուն քառորդը չեն. այն գրավոր բողոքներն ալ այսօր քննիչ եպիսկոպոսին գրասեղանին վրա կկենան. ե որչափ որ բողոքներուն մեջը դրված են, այնպես երկուք ալ քննութեանը պիտի բանա. ասի առանց տարակուսելու կպնդենք: Մեր վարդապետը թելք ունի նե բերանը չբանար, վասն զի բանանե հոար աշխարհ կըռնե...:

Այվադուքին ինչ կարգադրութեան որ ըրեր էր Նախիջևանի համար, զանի, իհարկե, վիճակին ուրիշ տեղիւնքն ալ կքալեցնել: Բացի մայրաքաղաքներն, այսինքն որ Մոսկվայն ու Բեդերսպուրկն է), ուր զառաջնորդն ալ, անոր հրամանն ալ ըրած կամ ընելիք կարգադրութեաններն ալ միասին կդռոշմեն:

Վերը հիշված հարկերուն գումարները կհասնին մեր անարծաթ Գողմա և Դամիանոսի ձեռքը. բայց ասոնք չեն մենակ. այլ և բոլոր վիճակի (մայրաքաղաքներն զատ) մեջ գտնված եկեղեցաց տարեկան ծախքերն է) և ելցած գումարներն ալ, ըստ որում եկեղեցականներն կպահանջեր ու պահանջելն ետքը կառներ ալ: Ընթերցողը չկարծե թե ասոնք առաջնորդին պատկանյալ գումարներ են, քով և մի լիցի: Եկեղեցաց գումարներն եկեղեցիներունն էր, որ միշտ կդիվեր այն դիտավորութեամբ, որ նշանավոր դրամագլուխ մը բաղկացնելն ետքը դպրոց մը բացվի, բայց անունը որ դպրոցին տարեկան ծախքը՝ որչափ մեծ ըլլա նե ալ դրամագլուխին շահովը միայն դոցվի, բնավ մայր գումարին ձեռք չդիպնելով, որ կործանման ապահով ճամբա մըն է: Աթոռային ըսված կամավոր նվերքն

ա) Տպագրում՝ կճանչեք:

բ) Տպագրում՝ ձեռագրում՝ աստ:

գ) Զեռագրում՝ հիմկուհի-մա:

դ) Զեռագրում՝ Գեաերբուրկն:

ե) Տպագրում և ձեռագրում՝ ծախքերն:

ալ, որ առաջ հոգարակամ է անրոնադատ ըլլալով աննշան գումար մ'էր, զարձայ էջմիածնա ու զպրոցներուն վրա ծախք ըլլալու կ'ենթադրվեր: Ե) Իսկ առաջնորդը 2100 քարպովանցի չափ տերութեան գանձեն ռոճիկ կտտանար (ինչպես Այվազովսքիին) և Քիշնևի, Աքզիրմանի և Գրիգորուպոլսի) մեջ գտնված առաջնորդական այգիներուն և պարտեզներուն արդյունքն ալ անոր կհասներ, որով առաջնորդին տարեկան կանոնավոր եկամուտը 3000 քարպովանցի կ'ելներ:

Հին դրամներուն խոսքը չենք ընել. հին դրամներ ըսածնիս ալ ու իսլապյանէն առնվելիք ստակները չեն, որ 64.000 քարպովանց մեյ մը իսլապյանցն տվեր է ասի՝ Այվազովսքիի առաջնորդ ըսվելէն առաջ—50,000 ալ մեյ մը.—9000 քանի քարպովանց ալ՝ տակավին վարդապետին երեսը չտեսած 1858-ին իսլապյանցը անոր դրկեր է եղեր: Այս վերջին գումարը հարկավ դավազանապտուղ մը ըլլալու է, ինչու որ անոր նշանակութիւնը մարդ մը չգիտեր, բայց և այնպես ասի իրողութիւն մ' է քանի որ Բասդաշի պուռոյին մեջ նշանակված է... հին գումարները սա Մատթեոս սրբադանի (Այվազովսքիի նախորդը) օրով (1846—1857) Նախիջևանի եկեղեցյաց մեջ գոյացած մայր գումարը, որ անողոքելի է անստգտանելի ճշտութեամբ դրեր էր Օղեսոսայի դրամանոցին մեջ՝ յօգուտ եկեղեցյաց և ապագա մայր զպրոցին շահով բանալու համար: Այլ և նույն սրբադանին մասնավոր մարդոց ձեռք անցուցած դրամները, որոնց ազահովութեան համար կրկնապատիկ և եռապատիկ արժողութեամբ անշարժ կալվածներ գրավի առեր էր հանուէն եկեղեցյաց և ասոնց ամենաւն թուղթերը վիճակեն ելնելու ատեն նախարարութեան հրամայելովը Այվազովսքիին ավեր էր, անկե այս ամենը ստանալու համար ձեռագիր մը առնելով:

Չըսենք Խրըմի եկեղեցյաց ստակները որ Տեովլեթյանց աղնվական Թորոս աղայի ձեռքը կգտնվեր, չըսենք Պետարապիայի եկեղեցյաց ստակները, որ Անսուլյան Կարապետ աղային քովը կգտնվեր՝ Ավետյան Աստվածատուր աղայի մեռնելէն ետքը: Չըսենք Գիշնովի) մեջ հանգուցյալ Ներսես կաթողիկոսի ջանքով և աշխատութեամբ եկեղեցական լայնածոց շինութեանց արդյունքը, որոնց տարեկան եկամուտը քանի մը հազար քարպովանցի կ'ելներ: Չըսենք Խրըմի վանքի անտառին արդյունքը կամ նույն վանքի Օրպաղարին մոտերը ունեցած Օտեխայդաճ ըսված հողին արդյունքը, և այլն, և այլն, որ մեկը ըսենք, ասոնց ամենուն ցուցակը մեր քով չէ՝ յա: Ահա այս ըսածներուն ու չըսածներուն պարզ կտեսնվի, թե ինչ սոսկալի գումարներ (մեր ազգի արդի վիճակի համեմատութեամբ կըսենք) անցան Այվազովսքիի ձեռքը: Միմիայն տարեկան մուտքը՝ ի բաց առյալ իր արքունի ռոճիկը, ի բաց առյալ մայր գումարները, ի բաց առյալ վերը հիշված այգիներուն արդյունքը, ի բաց առյալ մայր գումարներուն տուրքը 10.000 քարպովանցն ավելի էր:

Ասոնք որ կույր կուսակցութեամբ մը ըսեմ, թե անդիաւթյամբ, վասն զի շիտակը զբուցելով զժվարնիս) կուգայ գեղեցկութեամբ ըսելու: Ասկե քանի մը ասորի առաջ՝ զԱյվազովսքիին պաշտպանելու կճգնեին,

ա) Տպագրում՝ կենթագրվեր:

բ) Ձեռագրում՝ Գրիգորիոպոլսի:

գ) Տպագրում՝ Քիշնևի:

դ) Ձեռագրում՝ զժվարնիս:

պետք է որ այսօր պատասխան տան՝ թե ի՞նչ եղան աս քանի մը հարյուր հազար քարպովանցները ա) իրենց շահերով ու տարեկան եկամուտներով. ինչպէս կ'ըլլեցան բ) և ինչպէս եղավ սր եկեղեցիները և անոնց վարձկան առաջնորդը այս օրվան օրս բացը ելան:

Այվազովսքիի ներքին գործոց տեղեկություն չունեցողը կրնա թերեւ անոր աշխարհածանոթ ճիշդութեան չեզժիւն խարվելով կարծել թե մեր անարձաթ Կողման դպրոցին վրա է գրեր աս ամենը: Մենք չըսենք ասոր դեմ տակավին այն իրողությունը՝ որ ինքը Այվազովսքիի հայտնած է թե եկեղեցական գումարներն տարին 6000 քարպովանց իր բնակութեան ու սննդյան համար ծախք կրնն եղեր, վերը հիշված իր կանոնավոր ոռճիկներն դուրս (ասի իր խոստովանածն է ու կերեալ) թե այն օրն սկսելով է՝ որ իր նկարիչ եղբորը հետ քիչ մ'անախորժություն ունեցավ ընտանեկան ծախքի պատճառով, վասնզի նկարիչը կըսեր թե այսչափ ատեն ինքը պահեր է ընտանիքը, հիմա ալ թող վարդապետը պահե, հիմա անոր ձեռքը շատ ստակ կա և այլն):

Չըսենք նաև թե Այվազովսքիի պես մեկը չէր կրնար դրամոց հոգաբարձություն ընել. պ. Ալթընճյանց անբարի այն երեւիլի դաշնագիրը վկայե մեր խոսքին... Չըսենք նաև թե իր ցնդաբանությունքը (որ երկուքի կըրաժնվի, մեկը անամոթ համբավի անսանձ տենչանոք ինքզինքնին գովելու, մեյմ'ալ աս, ան վատաբանելու, ասոր անոր վրա մուր քսելու, Մխիթարյանց⁷⁾ հայհոյելու և այլն (որոնց համար ստակ մ'ալ տվող չկա) տպելու համար տպագրական մեծամեծ ծախքեր ըրին: Այլ սա միայն ըսինք, թե դպրոց մը բանալու համար, ան ալ մեծածախք դպրոց մը (ձգենք ասոր ներքի իսկությունը) սակայն ավագը կրնա հիմ գ) ըլլալ:

Իննքն թե առձեռն պատրաստե) 200.000 քարպովանց դրամագլուխ մ'ունինք, բայց կրնանք այս գումարին շահովը, որ շատ շատ տարին 10,000 քարպովանց պիտի ըլլա 5 % են ապահով կերպը առնելով դպրոց մը բանալ որուն տարեկան ծախքին համար եթե 18.000 քարպովանց չըլլա նե՝ պիտի գողվի՝ ինչպես ասկե տարի մ'առաջ հայտնեց Այվազովսքիի առ Խալիպյան գրած մտերմական նամակին մեջ... Այս գումարին վրա 6.000 քարպովանց վարդապետին ծախքն ալ ավելցնելու ըլլասք նե հետեյալ թիվը պիտի ստանանք 24,000 քարպովանց՝ մինչդեռ մեր դրամագլուխը 10.000 քարպովանց կրերե: Ասոնք ըլլալեն ետքը հայտնի է որ ամեն տարի 14.000 քարպովանց իր շահով հանդերձ մայր գումարեն վայր երթա պիտի. ամեն տարի ալ այս վրա տալիքը պիտի ավելնա՝ վասն զի մայր գումարն ալ չկրնար տարին 10.000 քարպովանց բերել: Աս ալ բավական չէ գեո ևս ելնել ահագին շինվածք մը շինելու ձեռք զառնել, որով նախնական ենթադրված 200.000 քարպովանցին կեսին իջեցնել: Ըսել է թե 5.000 քարպովանց տոկոս առնել տարին ու 19.000 քարպովանց վրա տալ: Այս սքանչելի գործողութեան հետեանքն ի՞նչ է. միթե կարոտություն կա ըսելու դպրոցը քանի մը տարիեն բացը կ'ելնե, կ'զոցվի կամ էն շառք

ա) Ձեռագրում քարպովանցիները:

բ) Ձեռագրում՝ Կըլլեցան:

գ) Ձեռագրում՝ կերենա:

դ) Ձեռագրում հիմն:

ե) Ձեռագրում՝ պատրաստի:

Նրբմի թաթարներուն էշերը ու կովերը կկապվին մեջը ու այնքան հագար քարպովանցն ալ դուր տեղը վատնված կըլլան:

Այս ամենը առաջուց տեսնողներն¹⁾ էին՝ որ դեմ էին Այվազովսքի թանհիմն գործքին. ըստ որում արևու պես հայտնի էր որ անոր բռնածը չեւնելիք ճամբա մըն էր, ա) ձգենք ուրիշ պատճառները, ձգենք որ Նախիջևանի ստակով Թեոդոսիո մեջ դպրոց բանալը, լոկ այն պատճառով որ վարդապետին ընտանիքը հոն կրնակի, ուտելու ապուր չէր, վասն զի Նախիջևանն այսօր իր հինգ դեղերով 3000 տուն է, իսկ Թեոդոսիա 120 հայու տուն կա ամենը: Հայտնի է թե դպրոցին կարոտությունը ավելի զգալի է Նախիջևանին համար ու ավելի կարևոր այն անգին, քան թե Թեոդոսիոն) համար:

Չենք ուզեր բնավ բերան բանալ աս դպրոցին ծախքերուն վրայոք, վասն զի խեղճ բան էր, ինչու որ հագարով ոռճիկ ստացողներ քանի հաւկային ու ինչ մարդիկ ու ինչու համար, մինչդեռ դպրոցին տղայքը անթոթության հետ պատերազմելով վերջապես 1863-ին ալ չկրցան ու խմբովին կծկեցին. ասի մենե առաջ օրագրերու մեջ գրեցին նե ալ քանի մը պարզաները դեռ մնացեր էին գրվանի տակ ու մենք ուրիշ անգամի կձգենք, վասն զի այն ամենը անհնարին է մեկ գրվածքով մը գոուրսցաթկեցնել:

Այս փոքր ի շատե ծաղկաքաղը անոր համար ըրինք, որ ընթերցողը հասկնա թե Նախիջևանցոց բողոքը և կաթողիկոսի միջամտությունը ազգային ամենահարկավոր կարիք մ' էր, ուստի և քննիչ գրկելը ու այս ամեն չարագործությանց վերջ դնելը հագար ու բյուր անգամ անհրաժեշտ:

Ներուսն խնդրելով ընթերցողներեն քիչ մը հին բաներու քով անցնելու համար՝ շարունակենք նորերը:

Անդրեաս եպիսկոպոսին Նախիջևան հասնելեն քանի մ' օր առաջ Այվազովսքին էջմիածնեն վերադառնալով և Նախիջևանի մեջ երեք օր մնալով յուր արբանյակներուն և հոգևոր կառավարության պատվիրեր էր որ եպիսկոպոսը գալու ըլլա և քննություն սկսելով՝ անոնցմե տեղեկություն կամ հաշիվ պահանջելու ըլլա նե՝ բնավ չտան և իրեն ըսեն ալ որ առանց առաջնորդի հրամանին չեն կրնար եպիսկոպոսի պահանջումը գոհացնել: Եպիսկոպոսը Նախիջևան գալեն ետքը իրավցնե ասանկ ալ եղավ. ըրա որում անպիտան քահանայքը գլացան եպիսկոպոսին անոր պահանջած տեղեկությունքը, առաջ բերելով իրենց վարդապետի հրամանը, թե եպիսկոպոսը ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակով էր եկել: Սա ալ չմոռնանք հիշելու Այվազովսքի ինչճաստիճան կաթողիկոսին դեմ ըմբոստանալը ցուցնելու համար, որ այն երեք օրվան մեջ հոգևոր կառավարությունը հրաման ըրեր էր «րպեսզի առանց իր 7) առաջարկության՝ ուղղակի կաթողիկոսեն խաչ ստացող քահանայքը չհամարձակվին խաչերնին կրել: Ինքը՝ Այվազովսքին, առաջնորդ անվանված ատեն, առանց մեկու մը պարգևելուն և հրամանին աննկարագրելի անամոթությամբ վաճառանոցն խաչ մ' առեր ու վիզը անցուցեր էր (ասոր ակունատեսները հագարավոր են) և 1859 նոյն խաչով գկաթողիկոսը Փոթիի նավահանգիստը

ա) Ձեռագրում՝ մ' էր:

բ) Տպագրում Թեոդոսիայի:

գ) Ձեռագրում՝ պահանջը:

դ) Ձեռագրում՝ յուր:

դիմավորելու հանդգներ էր: Եւ քեր աս ան միջնորդ ձգելով (Մակար Եպիս-,
կոպոսը և Մկրտիչ վարդապետը—այժմ Եպիսկոպոս—վկայ են այս բանին
թող զկաթողիկոսը:⁸⁾ Կաթողիկոսն ալ անոր տղայական փառասիրության
վրա խղճալով այն խաչն կրելու համար անոր կոնդակ մը տված ըլլալով
Այվազովսքիի աններելի սխալը շտկած էր նե ալ՝ հիմա նույն Այվազովս-
քին իրեն խաչ ավողին ուրիշներուն տված խաչը չընդունելու փորձ ըրա՞վ
թեև մոռով մը չեղավ, դի տերության օրենքով ատի կաթողիկոսական մեկ
ըրա՞ծը արտոնություն մ' է, որ անկե դատ կայսրը միայն կրնա տալ. իսկ
առանցմե զատ ոչ մեկ պաշտոնյա մը չունի այս արտոնությունը:

Անդրեաս Եպիսկոպոսը հոգևոր կառավարության պատասխանը սոա-
նալով ստիպվեցավ գրել և ծանուցանել Այվազովսքիին թե իր գալը և թե
իր նպատակը: Եւ կաթողիկոսի կոնդակի գորությամբ պահանջեց անկե որ
իսկույն հրաման ընե հոգևոր կառավարության իրե հնադանդվիլ և իր ըսե
լիք հարցմունքներուն ստորագա(սա)բարա) պատասխանել. մեկ խոսքով
քաղաքավարությամբ մը հասկցուց անոր, թե ինքը քննիչ է ու թե Այվա-
զովսքին իր առաջնորդական տնտեսությամբ հանդերձ այդ քննության
նյութը և առարկան: Ահա այս ըոպեեն սկսած մեր վարդապետը հրապա-
րակավ տնկեց կաթողիկոսին դեմ ապստամբության դրոշը:

Վաղուց քարոզված դրություն մ' է, թե թերակրթությունը ավելի
ճշմասկար է քան թե տյուզճե տղիտությունը. բայց Այվազովսքին նոր
օրինակով մ' ալ հաստատեց զանի: Անմիջապես պատասխանեց Եպիսկոպո-
սին թե ինքը օգոստափառ կայսեր հրովարտակով նշանակված առաջնորդ
ըլլալով մեկը չհամարձակիր եղել անոր վրա քննիչ դրկել առանց կայսեր
հաճությունը կանխավ առած ըլլալու: Եւ որովհետև կաթողիկոսը առանց
կայսեր հրամանի ինքն յուր հեղինակությամբ ըրեր է ասի՝ ուստի Այվա-
զովսքին ինքզինքը ազատ կճանաչեք) եղեր Եպիսկոպոսի պահանջումը
կառարելեն:

Ի՞նչ խեղճ բան: Ստույգ է տերության օրենքին մեջ կա հողված մը,
որ կըսե. «Գերագույն հրամանով հաստատված պաշտոնակալ մը չկրնար
քննության ենթակա ըլլալ առանց գերագույն հաճության»։ Բայց նույն
օրենքին մեջ՝ ուրիշ հատորին մեջ՝ ուրիշ դիպվածով մը այս հողվածը բա-
ցադրված է. «Թե քննությունը պաշտոնե դուրս գործված հանցանքի հա-
մար կենթադրվի»։ Ըսել կուղե թե կայսեր հրամանով նշանակված պաշտո-
նակալ մը իր գ) պաշտոնեն դուրս ուրիշ հանցանքի մը մեջ գտնվելու ըլ-
լա նե հարկավ անի իր պաշտոնական իշխանությանը (որուն որ ինքը են-
թադրյալ է) չվերաբերիր, ուրեմն՝ անի հասարակաց տեսչության այսինքն
ընդհանուր դատարանի կարգին պիտի հանձնվի. բայց քանի որ այն մար-
դը կայսեր հրովարտակով պաշտոն մը կվարե, ուստի անմիջապես կայսեր
իմաց պիտի տրվի ու անոր հրամանը ընդունվի: Բոլոր գավառապետները
կայսեր հրովարտակով կհաստատվին, բայց ներքին գործոց նախարարը
կրնա անոնց վրա քննություն բանալ, թե որ ըստ պաշտոնի չարագործու-
թյուն մը կանեն և ասոր համար հարկ չէ որ ամեն անգամ գտերությու-

ա) Տպագրում՝ առորոգաբար:

բ) Տպագրում՝ կճանչե:

գ) Ձեռագրում՝ յուր:

նը անհանգիստ ընել: Առաջնորդները (ռուսաց) կայսեր հրովարտակով կը-
գրվին, բայց ռուսաց ս. Սինհոդոսը՝ ուզած ատեն կրնա անոնց վրա բնու-
թյուն բանալ: Ասանկ ալ օրենքի մեջ ըսված է որ հայոց առաջնորդ-
ներու գործերը, անոնց թե եկեղեցական և թե ըստ պաշտոնի ունեցած թե-
րությանց մասին բողոքները կվերաբերին էջմիածնյան սրբազան Սյուն-
հոդոսին, Գ) որուն ատենապետն է ծայրագույն պատրիարկ կաթողիկոսը:
Առողջ դատողությունը արդեն կստիպե թե մեր վարդապետի առաջ բերած
օրենքը մեկնություն մը ունենալու է. վասն զի առաջնորդն բարձր օրի-
նադրյալ իշխանությունք կան, որոնց ենթադրված են առաջնորդները օ-
րենքի գորությամբ: Թե որ առաջնորդները կայսեր հրովարտակով հա-
տատված ըլլալով միմիայն կայսեր հրովարտակով պիտի ստիպվին պա-
տասխան տալ իրենց ըրածին համար, ալ ինչ հարկավոր է Սյունհոդոս, Գ)
ինչ պետք է կաթողիկոս:

Խորեն վարդապետը իր իրավաբանական դասերեն մեկուն մեջ՝ վերոհի-
շյալ օրենքին վրա ճառեր եր նե ալ սա կտորին լավ ուշադրություն չէր
ըրեր. ուստի մենք քիչ մը բացատրեցինք որ առ օրենքին պետք ունենո-
ղը՝ զանի անբարտապանության հենարան չկարծե: Առհասարակ աս ալ կը-
սենք, ու օրենքի շառավիղներուն մեջ չմոլորիլը «քշոցին խնդիրը» լուծե-
լու չնմանիր. խաչ մ' ալ չէ որ բազարեն առնես վիզդ անցնես. անի ու-
սում կուզե ա գուգում: Դժբախտաբար կաթողիկոսի բացած քննությունք
մեր վտրդապետի պաշտոնական գործերուն կվերաբերին. օրինակի հա-
մար, եկեղեցական հաշիվներուն և դրամներուն բանը եկեղեցվո խորհուրդ-
ները և քրիստոնեական արաբողությունքը, որ Հուսուփի և Բուզայի ժա-
մանակներն անգամ ադատ էին՝ Այվազովսքիի օրով հարկեցաւ կապվիլը և
այլ այսպիսի շատ մը բաներ:

Անդրեաս եպիսկոպոսը Այվազովսքիի իրավաբանության վրայոք թող
կաթողիկոսին գրելու վրա ըլլա մենք նայինք թե տակավին ի՞նչ կընեն մեր
վարդապետը, թե և չըրած ալ գիտեինք իր Ե) ընելիքը, սակայն ընելե ետ-
քը իրողությանց անունով ու վկայությամբ խոսիլն ավելի դյուրին աւ
հաստատ հլլալու համար որոշեցինք որ մենք ալ եղածը միայն ծանուցա-
նեմք: Եղածն ալ աս է:

Մեծադիր գանգատագիր մը առ ներքին գործոց նախարարը կաթո-
ղիկոսեն, Հայրապետյանցեն (Նախիջևանի քաղաքապետ) և Նալբանդյան-
ցեն: Հազար սուտ. բյուր գրպարտություն՝ ըստ ամենայնի ձրի տալով,
ըսես թե ասի ճանանուխը և չամանը տասանորդողը չէ:

Այս բողոքովն ալ գոհ չըլլալով՝ ֆրանսերեն գազտնի նամակ մըն ալ
կոմս Սիվիերսին³⁾: Ասի ներքին գործոց նախարարության մեջ այլակրոնազ-
գաց հոգևոր գործոց կառավարիչն է, և ճշմարտությունը միայն խոստո-
վանած կըլլանք թե որ ըսենք միանգամայն՝ և մեր Այվազովսքիի արա-
բիչը:

ա) Ձեռագրում՝ ո. սինհոդոսը:

բ) Ձեռագրում՝ վերա:

գ) Ձեռագրում՝ սինհոդոսին:

դ) Ձեռագրում՝ սինհոդոս:

ե) Ձեռագրում՝ յուր:

Այլ այս գաղտնի նամակին վրայոք ինծիս) բան մը մի հարցնեք: Բնծի կուգայ որ մեր վարդապետը այս նամակեն վիճադրությամբ շատ օրինակ քաղեր և քովը պատրաստ կպահեն, պետք եղած ատենը ամսաթիվը ու տարին միայն նշանակելով փոստային կուտայ. վասն զի 1858 են ակսած անոնց բովանդակությունը չփոխվիր ու կրնանք ըսել թե տարին ալ էս քիչը, չորս հաստ տարվտն ամեն մեկ եղանակին համեմատ, կգրկե¹⁰⁾: Հարկավ ասի վիճադրված չըլլար նե 6 տարու մեջ փոփոխություն մը կրկրեր, մնաց որ օրինակն ալ Մեշուխեշային ձեռքը չէր անցնել:— Մեշուխեշան կիոստանա օր մը անոր թարգմանությունը հրատարակել բնագիր Ֆրանսերենին հետ (ինչ ֆրանսերեն). թե որ խոսքը բոնե հրատարակե նե՝ անտարակույս ընթերցող հասարակությունը ոչ միայն առիթ կունենա մեր ազափնամիտ վարդապետի բերնին սկրթունքը, ր) տյլև քիչ մը մեր թուրք հար. ներքի դին ալ տեսնելու, քանզի մատնության ալ դավաճանության ասպարիդին մեջ միայն վար կշնե ան իր դիմակը: Իբրավ որ կղզւինք անդադար այս պժվալի բաներու վրա մտածելն, որ մարդկությանը նախատինք կրերե և որ անդադար կրկնությամբ տաղտկացուցիչ միօրինակություն մը կընծայե մեզ: Եւ այց հակամայից բռնադատյալ ստիպված ենք քանի մի խոսք այս նամակին վրա ալ ընել:

Այս նամակին տարերքն ալ թուրականին պես սուտ, զրպարասություն և լկտիություն: Ընթելցողը կարծեմ ալ չտարակուսիր, որ նամակին բովանդակությունը դարձյալ այն երեք մարդոց վրա կդառնա. կաթուղիկոս, Հայրապետյանց, Նալբանդյանց, Նալբանդյանց, Հայրապետյանց, կաթուղիկոս: Այս երեքը, ինչպես իրեն, անանկ ալ տերության թշնամի են եղեր. մանավանդ Նալբանդյանցը որ ամենուն խզտրմիշ կընե եղեր (կերենա թե դինքն ալ խզտրմիշ է ըրեր), տերության հայտնի է եղեր, բերդը կպահվի եղեր, և այլն և այլն. բերնի թափթըփուք, անոր խստագույն պատիժ մը տալը տերության մեծամեծ օգուտներ պիտի բերե եղեր (մոլիս, Գաբրիկ, բազում լրբութիւնքդ զքեզ ի մոլութիւն ածէ), ըստ որում անոր նման խռովարարներն ալ անոր պատժվելովը ր) կրնան խրաափիլ եգեր:

Այս խոսքերը անարդարություն են տերության, քանզի ասոր զրոյը Ռուսիո մեջ օրենք չենթադրեր, երբ կկարծե թե մարդ մը կրնա պատժվիլ բախտախնդիր մեկու մը քսությամբ: Թե որ Նալբանդյանցը հանձնեք մը ունի տերության ասջե՝ անոր համար տերությունը գատաստան ունի, գատաստանին կվերաբերի գանի գատապարտելը կամ արգարացնելը, ալ բնավ ուրիշ մեկը չկրնար խառնվիլ, գատաստանն ալ առանց օրենքի չկրնար գանի գատապարտել:

Խորեն վարդապետը իր բնախոսական (ֆիզիոլոգիք) գասերուն մեկուն մեջ Արիստոտելին հետեւելով՝ ըսած էր, թե մարդուս ուղեղը ըսպունդի նման բան մե, ասոր վրա, որչափ որ գայթակղեր էին նե ալ անդամազննութենե ու բնախոսութենե դուրս՝ կրնա ընգունվիլ Արիստոտելի ըսածը Այվազովսքիի ուղեղին վերաբերությամբ:

Մենք ընգհատեցինք բողոքի շարունակությունը քանզի ձանձրա-

ա) Ձեռագրում՝ ինձ:

ր) Տպագրում՝ սկրթութիւն:

գ) Տպագրում՝ պատժվելը:

ցանք. մեկ խոսքով մեր մովպետան մովպետը կրսե. ինչ որ չար բան կա աշխարհիս երեսը ամենը «Արհմն արար» — Հայրապետյանց և Նալբանդյանց (կարծեցուցանե զքեզ դեղ)։ Վարդապետը կրողոքե նե՝ ասի լոկ իր անձնական քաջածներուն պատճառովը չէ, քով լիցի. բայց անոր համար է, որ ցավոք սրտի կառավարութեան, թե իրա՝ տերութեան ըրած խոստմունքը աս արգելադրութենուն պատճառով չկրնար արդյունացնել։ Տերութեան հոգն է՝ որ զանի կմաշեցնե. թե չէ յուր քաջածներուն համար կխնդա. որովհետեւ երբ վարձքը շատ պիտի ըլլան երկինքը՝ և ինչպես կիրքերը իրեն համար, այնպես ալ ինքը կիրքերուն համար մեռած է։

Թոռաքը ուր տեղն է. այս գաղտնի նամակը կոմս Սիվերսեն ուրիշ մեկը չպիտի կարդա եղբր, հիմա անոք օրինակը Թեոդորիս մեջ ձեռքե ձեռք կպարտի։

Մեր վարդապետը իր բանականութիւնը իսպառ գոհեց է, իր սրտի կատաղութեանը, քանզի միեւնոյն նամակին մեջ կրսե. Ա. — Հայրապետյանց և Նալբանդյանց ժողովրդին վրա մեծ ազդեցութիւն ունենալով՝ որտեքնուն ուզածը առաջ տանել կուտան ու ինքը այս պատճառով անպատիվ է ժողովրդյան առջև։ Բ. — Բնավ մեկը իրեն ընդդիմութիւն մը չընեց և ամենքն ալ զինքը մեծ պատվով կընդունին այս երկուքեն զառ, որ կորսվելու ըլլա նե՝ շատ աղեկ պիտի ըլլա. վասն զի ժողովրդին ալ առաւելի են։ Ետքը մասնավորապես նորեն դառնալով Նալբանդյանցի վրա կրսե. «Ո՞րք Նալբանդյանց զոր բնավ մեկը չճանչնար»։ Բայց ինքը Այվազովսքին մեծ և անպայման ազդեցութիւն ունի եղբր բոլոր հայոց և մանավանդ Տաճկաստանի հայոց վրա. սակայն Նալբանդյանցը սպաննեց է անոր ազդեցութիւնը...

Ստույգ է որ ճիշդ իմաստները երբեք չկրցան սիրել տրամաբանութիւնը, բայց այս չափ ալ չկրցան չարչարել զանի։ Հսենք թե Նալբանդյանը կերպարանյալ ոչնչութիւն է. Այվազովսքին կարպարանյալ էութիւն. սքանչելի անձ մ'որ Արրահամ ալ ցանկացեր է) է եղբր անոր օրերուն մեկը տեսնել ու չէր կրցեր. արեգակ մը որ նախախնամութիւնը 19-րդ դարու հորիզոնին պահեր է եղբր։ Այս Դերկու դրութիւններն ալ առանց պայմանի բնորոշինք։ Նալբանդյանցի համար «ի խաչ հան զդա» պոռանք. իսկ Այվազովսքին վրա ցուցնելով է) «հա առաւելածն քո Խարայել որ եհան զքեզ յԵգիպտոս» ըսենք. թե որ ասով ալ զսի չըլլար նե՝ իր արձանն ալ համապատիվ կայնեցնենք «Աստարտայ, Գամսվսայ և Մեղքոմայ արվարձանի և Թարահատայ, Թարմատարի և այլն»։ ասկե անդին պատիվ չըլլար ա։ Բայց տրամաբարութիւնն է) ինչ ընենք։ Դուն ալ անոր խոսքը կըլլա. «տրամաբարութիւն վասն մարդոյ եղև և ոչ մարդ վասն տրամաբանութեան. ինչ կուգե նե ըլլա «միթե պահապան իցեմ տրամաբանութեան»։

— Չէ, մենք զանի չենք ձգեր պայառի ճեղքեմի մ'ըլլալով գրոց աշակերտ չենք նե ալ գործածնիս ճոն Սթյուարթ Միլի տրամաբանութիւնն է. Այվազովսքի բանին կուգա նե՝ կարդայ զանի. մեր բանին կու գա և

ա) Ձեռագրում՝ յուր։

բ) Ձեռագրում՝ չճանաչեր։

գ) Տպագրում՝ ձանկացեր։

ե) Ձեռագրում՝ ցուցանելով։

ե) Ձեռագրում տրամաբանութիւնը։

շատ ալ զոհ ենք. ուստի և տրամաբանության անուանով կըսենք ալ. ինչպես կըլլա որ ոչնչութիւնը Այվազովսքիի պես էութիւն մը կկործանեն, անոր ազգեցութիւնը կանհեաացնեն, անոր ձեռքերը կթլաան: Ասի անհնարին րան մ' է ե ոլովհեաե ամենքիս ալ բնության օրենքին աակը կապրինք, ասի չկրնար ըլլալ, ասոր մեջ սուտը մը կպահվաի որ տրամաբանութիւնը անպատճառ պիտի գտնեն և խայտառակն զանի: Ուժ մը չեզոքացնելու համար՝ բնականապես՝ անոր համադրող ուժ կպահանջվի. իսկ հաղթահարելու համար՝ առավել քան թե համազոր: Ըսենք թե կշիռք մ'ունինք ձեռքերնիս: Անոր թաթերը նշանակենք Ա. Բ. տառերով: Թե որ Ա.-ին վրան մեկ օգկայի ծանրութիւն ղենքն ին՝ Բ.-ը վեր կենն, զուգակշիռը չենք կրնար պահել մինչև որ Բ.-ին վրա ալ մեկ օգկայի ծանրութիւն մը չգնենք: Ապա եթե կուզենք որ Բ.-ը վերցնեն զԱ, ուրեմն անոր վրա դրածնիս մեկ օգկային ավելի ծանր ըլլալու է. ասի ամեն մարդ դիտե Այվազովսքիին դատ: Ծո, ավետարանին մեջն ալ չկորդար, թե որ զանի բացած ունի. «մեկը չկրնար հզորին տունը մտնել ու անոր ինչ(չ)քը հափշտակել, մինչև որ նախ զհզորը չկապեն»¹¹⁾ Ըսել է որ մանողը հզորագույն պիտի ըլլա՝ թե որ հզօրը իրավցնեն ան իր =) տունը մանողն պիտի կապվի: Գնեն չըլլար, ծո, կենն չհասկնար Այվազովսքին. անի դարձյալ իր էշը կթշի թ քաղտնի նամակին մեջ:

Այվազովսքին հզոր, ասի ինքը Այվազովսքին կըսեն, Նալբանդյանց անզոր, աս ալ Այվազովսքին կըսեն. այս երկու դրութիւնն ալ ունկ ղենելն ետքը դարձյալ նույն Այվազովսքին կըսեն թե սա անզորը եկեր զհզօրը կապեր ու անոր ունեցած անկն հաներ է:

Այվազովսքիին զատ՝ ամեն մարդ այո առգերը կարդալով՝ մարդկային բնականության ընդաբույս տրամաբանությամբ սանկ պիտի խօսի:¹²⁾

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Էպիգրաֆն առնված է Մեթրոպիւն վերագրված ծխարանից՝ «Մաշտոց»-ից:
2. Տե՛ս՝ «Մեղու», 1863, №№ 321 և 226:
3. Գնիքի պատմութիւնը «Մեղու»-ի ընթերցողներին հայտնի էր արդեն. տե՛ս՝ «Մեղու», 1861, № 135, Բ. Ատաճանյանի հոդվածը:
4. Քարբովանցը (ձեռագրում հանդիպում ենք նաև քարպովանց) ուղևորական ուղևորին էր. նշումը գործածական էր Ռուսաստանի հարավամասում և ծանոթ «Մեղու»-ի ընթերցողներին (տե՛ս՝ օր. «Մեղու», 1862, № 166, եր. 147):
5. Գալֆայանի մասին արված թափանցիկ ակնարկն ըստ ամենայնի համընկնում է «Աղջմիք»-ի երգիծանքի հետ:
6. Մխիթարյանների գեմ Այվազովսկու դրածները Նալբանդյանը նշում էր գեո իր «Մխիթար Սերաստացի և Մխիթարյանք» հազվածաշարում (տե՛ս՝ «Երկերի լիակատար ժողովածու» II, 210):
7. Ակնարկն այն պայքարի մասին էր, որ մզեղէր Նալբանդյանը ոչ միայն Պալի-րի և Այվազովսկու, այլև Հայրապետյանի՝ նրանց նկատմամբ տարած հաշտվողական գծի գեմ. Հմմ. Մ. Նալբանդյանի «Անախդ երկեր», եր. 377 և հտ. և «Երկերի լիակատար ժողովածու» IV, 243 և հտ.
8. Հավանորեն այս մանրամասները պատմել էին Նալբանդյանին 1860 թվին, էջ-միածնում:

Յ. Կոմս Սիվերսին (թե Սիվերսովին) ուղղված այդ գրությունը հայտարարված չէ տակավին: Սակայն Մատենադարանում գտանք Այվազովսկու կողմից ոմն «պարոն Կոմսին» — ըստ երևույթին նույն Սիվերսին ուղղած ֆրանսերեն նամակի սևագրության պատահելը, ուր, գանգատվելով «Վարդապետարանի» կապակցությամբ իր դեմ հանված «հալածանքների» մասին՝ նա անդրադառնում էր նաև «Արևմուտք»-ի էջերից եղած հարձակումներին. «Թերթի խմբագիրը — ասված է պատառիկում — որ դժբաղնացի հայ մի երիտասարդ է, ծանոթ Պարիզում և Արևելքում իր բնույթից գաղափարներով, հունիսյան ուղուցից ժամանակ՝ իր ձեռքակալումով, իր խռովասեր նկարագրով, իր հակակրոնական և մանավանդ հակառուս գաղափարներով՝ անցյալ ապրիլ ամսին բախտ ունեցավ հանդիպել Պարիզում պ. Նալբանդյանին, որը նրան հաղորդեց իր ոչ նվազ կործանարար գաղափարները և ուրիշ փաստաթղթերի հետ նրան ներկայացրեց Խալիբյանի դեմ գրած և արդեն Նաղարայանցի «Հյուսիսսփայլ»-ում հրատարակված իր այն հոդվածը, որի մասին ես պարտք էի համարել պաշտոնապես հայտնել մինիստրությանը և որն արտառվեց «Արևմուտք»-ում: Պարոն Լազարյանն իր նամակներից մինում ինձ արդեն հասկացրեց, որ այս թերթը շրջում է Մոսկվայի և Պետերբուրգի հայերի մեջ: Պե՞տք է նշել, որ Գ. Պուսի և Զմյուռնիայի հայ օրագիրները չթերացան հաղթականորեն պայքարի ելնել Պարիզի թերթի կատաղի գրպարտությունների դեմ և նրան...» (պատառիկն ընդհատվում է այստեղ) (տես՝ ՀՍՍԻ Մատենադարան, Երեցյանի արխիվ, թղթապան. № 10, վ. № 361): Պահվել է նաև Այվազովսկու ֆրանսերեն մի այլ գրության սևագիրը՝ ուղղված նույն Կոմսին, 1860 թ. հունվարի 20: Պաշտպանվելով Նալբանդյանի, Նաղարայանցի և էմինի՝ իր «Վարդապետարանի» դեմ արած հարձակումներից՝ հեղինակը երկյուղ է հայտնում այն մասին, որ իր գրքի արգելումը կարող է խիստ անբարենպաստ ազդեցություն ունենալ մանավանդ թյուրքահայերի հասարակական կարծիքի վրա, որն առանց այդ էլ չի համընկնում կառավարության ցանկացածին (տես նույն արխիվում, թղթապանակ № 166, վավ. № 363):

10. Այվազովսկու քաղաքականների մասին Նալբանդյանը ակնաբերում էր տակավին 1859 թվին Կոմս էմմանուելի «Հիշատակարանում: Այդտեղ, հազցնելով նրան Շամիլի դիմակը՝ աղատության որոնողի դեմ դնում էր նրա բերանը այս խոսքերը. «Ես քո դատաւանդ կհանձնեմ այն աշխարհի կառավարությանը, որի հպատակն ես գու... ինձ արժե միայն մի նամակ արձակել դեպի Պետերբուրգ, այնուհետ՝ ավարտված է քո առաքելը»: Ավելի ուշ՝ 1861 թ. Նալբանդյանը անգրադարձավ Այվազովսկու դրավոր քաղաքականների «Երկու տողում»:

11. Ավետարանի նույն այս օրինակը Նալբանդյանը բերում է նաև Ալֆոնզո Ռաթթի ստորագրած «Հռովմեական նամակում» (տես՝ Երկերի լիակ. ժող., II, 380):

12. Նալբանդյանը հաճախ էր առիթ ունենում ծաղրել «կույր կուսակցությամբ» արամաբանության կանոնները ոտնահարողներին: Կոմս էմմանուելը քրանցից մինին խորհուրդ էր տալիս՝ բան դրելու ժամանակ չպատկանել այս ու այն հակառակող բաժիններին, խոսել սառն հոգով և հավատարիմ մնալով լեզիկական կանոններին (Երկերի լիակատար ժողովածու, հ. I, էջ 318):

А. Г. Иоаннисян

Неизвестный памфлет Микаела Налбандяна

Р е з ю м е

Специальным выпуском константинопольской армянской газеты «Мегу», редактировавшейся А. Свачьяном, другом Налбандяна, в конце 1864 года был опубликован памфлет без подписи, под заглавием «Кое что из Айвазовсковедения».

Заостренный против одного из армянских агентов царизма, небезизвестного Габриэла Айвазовского, заклятого врага Налбандяна, памфлет этот обнаруживает революционно-демократическую направленность мысли автора, партийную его страстность и политический его задор. Написан памфлет на литературном языке западных армян, однако с явными следами оборотов и форм, свойственных лишь литературному языку армян восточных. Хорошее знание русского языка и русских законов и осведомленность в обстоятельствах и деталях затронутых в памфлете вопросов обнаруживают в авторе человека, проживавшего в России и лица высоко образованного и даровитого. Проникнутый едкой сатирой памфлет оперирует острой логикой, изобилует оборотами народной речи и ссылками из древнеармянских и европейских источников, попутно касаясь тем из области естествознания, политической экономии, истории, права, этнографии и проч.

Анализ языка и содержания памфлета дает нам ряд оснований приписать авторство его Налбандяну. Имеется ряд прямых совпадений встречающихся в памфлете фактов, мыслей, характеристик, эпитетов и сравнений с произведениями и письмами Налбандяна, в частности с его вещами, написанными в годы пребывания в Петропавловской крепости. Авторство Налбандяна поддерживается помимо всего выявлением общественно-политических и судебно-процессуальных мотивов публикации памфлета. В отношении мотивов своего возникновения и обычного для Налбандяна приема литературной маскировки своего авторства, памфлет этот перекликается с аналогичным его произведением, появившимся в том же году в московском армянском журнале «Юсисапайл» под заглавием «Народное бедствие», произведением, направленным против константинопольских армянских либералов, перед лицом нараставшего стихийного движения армянских масс в столице, бросившихся в объятие султанской реакции.

Таким образом, нет ничего странного в том, что памфлет Налбандяна, задуманный как редакционное выступление Свачьяна, написан на знакомом автору литературном языке западных армян. Однако, как упомянуто выше, памфлет изобилует рядом ляпсусов пера и языка, свидетельствующих о том, что автор говорил и писал обычно на литературном языке восточных армян. Подобные факты особенно часты в первоначальном варианте памфлета, обнаруженном нами в архиве Матенадарана. В сравнении с этим вариантом, напечатанный в «Мегу» текст значительно под-

правлен Свачьяном. Мы публикуем критический текст памфлета, взяв за основу печатный вариант, подстрочно отметив характерные разночтения выявленного нами рукописного его варианта.

В заключении статьи приводится свидетельство из адресованной царю докладной записки высокопоставленного сановника, дающее основание для вывода, что общественный резонанс замаскированного выступления Налбандяна оказался губительным для политической карьеры Айвазовского и окружавшей его реакционной своры.

Перед нами вновь выступает образ неугомонного трибуна демократической революции, находившего пути и средства через голову царских тюремщиков наносить сокрушительные удары врагам народа.